

Հյուսիսատլանտյան դաշինքի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Լ

Եվրատլանտյան
համագործակցությունը

Հայկական
ատլանտյան
ասոցիացիա



32

769

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏԼԱՆՏԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀՅՈՒՄԻՍԱՏԼԱՆՏԱՆ ԴԱՇԻՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ԵՎՐԱՏԼԱՆՏԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կառուցվածքը, խնդիրները, ծրագրերը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ

2005

49/2

Տագազրվում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և Հայկական ասոլանտյան ասոցիացիայի խորհրդի որոշումով:

Չեղմարկը պատրաստել է Հայկական ատլանտյան ասոցիացիա հեղինակային խմբը՝ Պրեստոն Լինդելի, Գավիթ Համբարյանի, Արման Ակոպյանի և Թևան Պողոսյանի մասնակցությամբ:

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

Տեղեկատվական բնույթի այս աշխատության մեջ լուսարանվում են Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպության՝ ՆԱՏՕ-ի տեղման մախադրյալները և պատմումները, մյա կառուցվածքը, ծրագրերն ու խնդիրները սառը պատերազմի և մրան հաջողաժ դարաշրջաններում: Առանձին բաժին է հատկացվաժ ՆԱՏՕ-Հայաստան հարաբերություններին: Հեղինակներն անդրադարձել են նաև եվրատլանտյան համագորժակցության հանգուցային հարցերին:

Նախատեսվաժ է մասնագետ-պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների, բարժրագույն ուսումնական հաստատությունների ուսանողության հանաք:

ՀՀ կրթության և գիտության մախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից հաստատվաժ է որպես ուսումնաժժանդակ ձեռնարկ բուսերի ուսանողների հանաք (իրանան № 39, 18/10/2005թ.):

Երագիրը ֆինանսաղորվել է ԱՄՆ Պետղեպարտամենտի հասարակայնության հետ կաղերի բաժնի կողմից տրամադրվաժ դրամաշնորհի շրջանակներում: Արտահայտվաժ կարժիրները, արդյունքները, եզրակացություններն ու առաջարկները արտացոլում են միայն հեղինակների տեսանկյունը և պարտաղիր չէ, որ հանղնղեն Պետղեպարտամենտի տեսանկյան հետ:

ARMENIAN ATLANTIC ASSOCIATION

NORTH ATLANTIC TREATY
ORGANIZATION
AND
EURO-ATLANTIC
COOPERATION

Structure. Tasks. Programs

This book was published by the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of Armenia and the Board of the Armenian Atlantic Association

The book was written by the Armenian Atlantic Association experts Preston Lindler, David Hambaryan, Arman Akopyan and Tevan Poghosyan.

Editor in-Chief Doctor of History, Professor Nikolay Hovhannisyán

This is a reference handbook which aims at illustrating the prerequisites and reasons behind signing the North-Atlantic Treaty, founding NATO, and presenting its structure, projects and goals during the Cold War and after. It includes a separate chapter on NATO-Armenia relations. In addition, the authors have discussed the crucial issues regarding the Euro-Atlantic cooperation.

It is designed for historians, politicians, experts in international relations and university students.

The National Institute of Education of the RA Ministry of Education and Sciences has recommended the handbook as a supplementary instructional material for universities. (Decree N 39, 18/10/2005)

This project was funded through a Department of State Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the authors and not necessarily reflect those of the Department of State.

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	7
ԳԼՈՒԽ I. ՀՅՈՒՄԻԱՏՏՆԱՆՏՅԱՆ ԴՎՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ՈՒՋՄԱԿԱՆ - ՔՄԴԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ	10
ԳԼՈՒԽ II. ՀՅՈՒՄԻԱՏՏՆԱՆՏՅԱՆ ԴՎՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՄՆՈՒՄԸ	22
Կազմակերպության կառուցվածքը	23
Դաշինքի ընդլայնումը	28
ԳԼՈՒԽ III. ՆՈՐ ՈՒՋՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՐՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՅՈՒՄԻԱՏՏՆԱՆՏՅԱՆ ԴՎՇԻՆՔԻ ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ: ՆԱՏՕ-Ն ԱՅՍՕՐ	30
Ուղղվածության փոփոխություն	33
Ավելին, քան ռազմական դաշինք	36
Խաղաղարար առաքելություն Բալկաններում	37
ՆԱՏՕ-ն և Հարավային Կովկասը	39
ԳԼՈՒԽ IV. ՆԱՏՕ-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ	41
ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների ներկան և հեռանկարները	41
Հարաբերությունների զարգացման ժամանակագրությունը	43
ՀԱՎԵԼՎԱԾ I. Հիմնական փաստաթղթեր	52
ՀԱՎԵԼՎԱԾ II.	71
Անդամ երկրները և ՆԱՏՕ-ի անդամակցության տարեթվերը	71
ՀԱՎԵԼՎԱԾ III. Լրացուցիչ գրականություն	75
ՀԱՎԵԼՎԱԾ IV. ՆԱՏՕ-ի ժամանակագրությունը	76

ԱԳԳԾ - Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր

ԱԳԼ - Արտաքին գործերի նախարարություն

Գ-ՀԽ - Գործընկերություն հանուն խաղաղության

Գ-ՀՕ - Գործընկերության համադրման օղակ

ԵԱԳԽ - Եվրատանտյան գործընկերության խորհուրդ

ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության

կազմակերպություն

ԵԽ - Եվրախորհուրդ

ԵՄ - Եվրամիություն

ԶՈՒԿՀ - «Զինված ուժերի կարգավիճակի մասին» համաձայնագիր

ՀԱԱ - Հայկական առլանտյան ասոցիացիա

ՀԱՀԽ - Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդ

ՀԱՊԿ - Հավաքական անվտանգության պայմանագրի

կազմակերպություն

ՆԱՏՕ - Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

ՊՆ - Պաշտպանության նախարարություն

ՊԿԿ - Պլանավորման և վերանայման գործընթաց

IFOR - (ՆԱՏՕ-ի) խաղաղ համաձայնագիրն իրագործող ուժեր

ISAF - (ՆԱՏՕ-ի) միջազգային անվտանգության օժանդակության ուժեր

KFOR - (ՆԱՏՕ-ի) Կոսովոյի համար նախատեսված ուժեր

SFOR - (ՆԱՏՕ-ի) կայունացման ուժեր

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը ժամանակակից աշխարհի միակ և ամենաուժեղ ռազմաքաղաքական կազմակերպությունն է, որը քանի գնում, այնքան ավելի առաջատար դեր է խաղում միջազգային հարաբերություններում: Դա մի կազմակերպություն է, որն ունի քաղաքական հզոր ներուժ, որի տնօրինության տակ են գտնվում վիթխարի արվեստական ռազմական զենքի բոլոր տեսակները, ներառյալ միջուկային և սինանթրոպական-նյութական լայն հեռավորություններ¹:

Տարեցտարի ավելի են ընդարձակվում նրա գործունեության ծավալները, ուղղությունները և աշխարհագրական սահմանները: ՆԱՏՕ-ն արդեն ստանձնի ղեպքերում անգամ փոխարինում է Միավորված ազգերի կազմակերպությանը, և շատ հաճախ աշխարհի այս կամ այն մասում առաջացող վտանգավոր ճգնաժամերի լուծման համար նախապատվությունը տրվում է հենց ՆԱՏՕ-ին:

Ժամանակակից աշխարհում ամենաը է անտեսել այդ կազմակերպությունը և հաշվի չառնել նրա գոյությունն ու ռազմա-քաղաքական առաքելությունը: Դա կոպիտ սխալ կլիներ, մանավանդ, որ ՆԱՏՕ-ն այժմ արդեն ամենուր է: Ավվածը հավասարապես վերաբերում է աշխարհի բոլոր երկրներին՝ մեծ, քե փոքր, հզոր, քե տկար, և անկախ այն բանից, քե աշխարհի որ մասում են նրանք գտնվում:

Դա հավասարապես վերաբերում է նաև 1991 թվականին իր անկախությունը վերագտած Հայաստանի Հանրապետությանը, որը հանդիսանում է միջազգային քաղաքիվ կառույցների անդամ և որն իր արտաքին քաղաքականության գերակա ուղղությունը հայտարարել է եվրոպականը: Իսկ եվրոպական ուղղության և կառույցների անբաժան մասն է կազմում նաև, ՆԱՏՕ-ն: Բնականաբար, Հայաստանը չի կարող հաշվի չառնել այդ հունգամանքը:

Նա չի կարող հաշվի չառնել նաև այն հանգամանքը, որ ինքն անմիջականորեն սահմանակցում է ՆԱՏՕ-ին, քանի որ վերջինիս անդամ թուրքիան Հայաստանի անմիջական հարևանն է: Սկզբնական շրջանում Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ սահմանակցում էր որպես ԽՍՀՄ-ի մաս կազմող

¹ Կազմակերպության անունը՝ «North Atlantic Treaty Organization» (NATO), անգլերենից Ռոտտառ թարգմանվում է «Կուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն», երբեմն օգտագործվում է նաև «դաշնագրի կազմակերպություն»: Ասվակ մենք նախապատվությունը տալիս ենք առաջին տարբերակին, որն ավելի տարածված ձևն է: Միաժամանակ գրքում հայերեն տառադարձությամբ օգտագործվում է այդ կազմակերպության անգլերեն անվան հարավորը՝ ՆԱՏՕ, որն ամբողջ աշխարհում դարձել է նրա զործածական միակ տարբերակը:

միտքեմական հանրապետություն, իսկ ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո Հայաստանը սահմանակցում է ՆԱՏՕ-ին արդեն նոր միջազգային կարգավիճակով՝ որպես ինքնուրույն, անկախ և ինքնիշխան պետություն: Այսպիսով, կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ի արևելյան սահմանները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության արևմտյան պետական սահմանները:

Ահա այս բոլոր գործոնները՝ աշխարհագրական, հարևանական, ՆԱՏՕ-ի քաղաքիկ ռազմա-քաղաքական դերակատարումը ժամանակակից աշխարհում, Հայաստանի արտաքին քաղաքականության եվրոպական ուղղության գերակայությունը, միասին վերցրած անհրաժեշտ են դարձնում Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը:

Սակայն դրա ճանապարհին կան որոշ բարդություններ:

Նախ, Հայաստանի ազգաբնակչությունը վատ է տեղեկացված ընդհանրապես ՆԱՏՕ-ի, և մասնավորապես ներկա փուլում նրա քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին: Միևնույն ժողովրդի իրազեկ լինելը կարևոր նախադասմանք է ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունները զարգացնելու և սերտացնելու հարցում: Դա մի այնպիսի սուր և սկզբունքորեն նոր հարց է, որ առանց ժողովրդի ինացության և հակցության շատ դժվար կլինի նման քաղաքականություն իրագործել, հակառակ պարագայում դա կարող է հանգեցնել ներքաղաքական լարվածության և անգամ հասարակական երկպառակտվածության, որն անօրյալություն է և չի համապատասխանում Հայաստանի ազգային անվտանգության ապահովման շահերին:

Դրան պետք է ավելացնել նաև այն իրողությունը, որ Հայաստանի բնակչության որոշ խավերի մոտ ՆԱՏՕ-ի հանդեպ դեռևս կան որոշ մախապաշարումներ, անգամ խիստ քացասական մտացունենք, որոնք գալիս են խորհրդային ժամանակներից, երբ կատաղի պայքար էր գնում աշխարհի երկու միմյանց հակադիր ռազմա-քաղաքական բլոկների միջև՝ մի կողմից Խորհրդային Միության կողմից դեկալավրվող սոցիալիստական երկրների համագործակցության և Վարշավայի պայմանագրային ռազմական կազմակերպության, իսկ մյուս կողմից՝ ԱՄՆ-ի կողմից դեկալավրվող արևմտյան երկրների համագործակցության և ՆԱՏՕ-ի միջև: Այդ հակամարտությունը խորը հետք է թողել որոշ մարդկանց հիշողության մեջ, որն իրեն զգացնել է տալիս նաև մեր օրերում:

Անհերքելի փաստ է նաև այն իրողությունը, որ Հայաստանի բնակչության մի որոշ մասի մոտ ցարդ առկա հակամատայական զգացմունքները մեծապես պայմանավորված են Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ լինելու հանգամանքով:

Վերոնշյալ հագանմանքները քելադրում է անհրաժեշտ են դարձնում Հայաստանի բնակչությանը տալ լիիրավ, օբյեկտիվ և հավաստի տեղեկու-

թյուններ ու գիտելիքներ ՆԱՏՕ-ի վերաբերյալ, ցույց տալ այն էվոլյուցիան, որ նա ապրել է վերջին տասնամյակում, մասնավորապես սառը պատերազմի դարաշրջանի ավարտից հետո, քացատրել Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության անհրաժեշտությունը Հայաստանի ազգային անվտանգության տեսակետից և հարակից այլ հարցեր: Գրանում մեծ դերակատարում ունեն մեր լրատվամիջոցները, ՆԱՏՕ-ի հետ առնչվող պետական մարմինները, առաջին հերթին պաշտպանության և արտաքին գործերի նախարարությունները, հասարակական, այդ թվում և ոչ կառավարական կազմակերպությունները:

Այդ հարցում կարևոր առաքելություն ունի 2001թ. հիմնված Հայկական սուլամոյան ասոցիացիան, որն Ատլանտյան դաշնային ասոցիացիայի անդամ է և համագործակցում է նրա հետ տարբեր ոլորտներում:

Ահա այս մղումով է պայմանավորված Հայկական առլամոյան ասոցիացիայի նախաձեռնությունը հայ ընթերցողին իր մայրենի լեզվով ներկայացնել տեղեկատվական բնույթի և ոչ մեծ ծավալի մի աշխատություն, որը բավարեր նրա պահանջները և անհրաժեշտ տեղեկատվություն տար նրան ՆԱՏՕ-ի, նրա նապատակների և քաղաքականության մասին:

Չեռնամուխ լինելով այդ գործին, հեղինակային խումբն իր առջև խնդիր է դրել լրատվանել Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության ստեղծման նախադրյալներն ու պատճառները, կառուցվածքը, խնդիրները և գործունեությունը սառը պատերազմի տարիներին, նրա էվոլյուցիան հետաառըպատերազմյան ժամանակաշրջանում և նոր քաղաքական կուրսի որդեգրումը նրա կողմից: Հատուկ քննարկման առարկա են լինելու Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները և նրանց զարգացման հեռանկարները:

Ընթերցողին ներկայացվում են նաև ՆԱՏՕ-ի մի քանի սկզբունքային և ծրագրային բնույթի փաստորոգրեր ու այլ տեղեկատվական նյութեր:

ԳԼՈՒԽ Լ.

**ՀՅՈՒՄԱՍԱՏԱՆՏՅԱՆ ԴՆԵՒԵԻ
ԿԱԾԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ
ՈԱԾՄԱԿԻ - ԶԱՂԱԶԱԿԱՆ
ՆԱԽԱՐԳԱՆԵՐԸ**

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության կամ ՆԱՏՕ-ի ստեղծման, միջազգային ասպարեզում նրա հայտնվելու պատճառներն ու նախադրյալները պետք է փնտրել այն նոր քաղաքական և ռազմական իրողությունների մեջ, որոնք միջազգային հարաբերություններում ձևավորվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո:

Պատերազմի ավարտից շատ չանցած քայքայվեց և դադարեց գոյություն ունենալ հակահիտլերյան կուալիցիան, որը ձևավորվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ: Հենց այս երեք պետություններն էին կուալիցիայի առաջատար ուժերը, որոնք իրենց ունեյի վրա տարան հիտլերյան Գերմանիայի կողմից ղեկավարվող ֆաշիստական բյուրի դեմ պատերազմի ամբողջ ծանրությունը: Ֆաշիստական վտանգը և համաշխարհային տիրապետության հասնելու Գերմանիայի քաղաքականությունը լուրջ սպառնալիք էր ներկայացնում հավասարազան Խորհրդային Միությանը, Մեծ Բրիտանիային և Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Դա ստիպեց նրանց, չնայած որ նրանք պատկանում էին տարբեր հասարակարգերի և պաշտպանում միմյանց հակադիր քաղաքական արժեքներ, միավորվել մեկ հակահիտլերյան կուալիցիայի մեջ, համատեղել իրենց ռազմական ներուժը, տնտեսական վիթխարի հնարավորությունները և քաղաքական ջանքերը, մարդկությունը փրկելու ֆաշիզմի արտառեկի վտանգից:

Այդ առումով կուալիցիան կատարեց իր պատմական առաքելությունը:

Սակայն սոցիալիստական Խորհրդային Միության և կապիտալիստական ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի դաշնակցությունը տեղի էր ունեցել ոչ թե կամավոր ընտրությամբ կամ գաղափարական հարցերում սկզբունքային զիջումների ու մերժեցման գնով, այլ հարկադրանքի՝ ֆաշիստական Գերմանիայի սպառնալիքի կամ պարտադրանքի տակ, այդ սպառնալիքին դիմադրայելու պահանջներով: Երկ երկ հիտլերյան Գերմանիան և նրա դե-կալվարած ֆաշիստական բյուրի ջախջախիչ պարտություն կրեց պատերազմում և վերացավ ֆաշիզմի վտանգը, ապա վերացավ նաև հակահիտ-

լերյան կուալիցիայի պահպանման անհրաժեշտությունը: Նրա անդամների ուղիները բաժանվեցին: Բայց դա սովորական բաժանում չէր: ԽՍՀՄ-ը և նրա արևմտյան դաշնակիցները ոչ միայն հեռացան միմյանցից, այլև հայտնվեցին հակադիր ռազմա-քաղաքական ճամբարներում:

Հակահիտլերյան կուալիցիան դադարեց գոյություն ունենալ:

Հանում արդարության պետք է նշել, որ անգամ պատերազմի ամենածանր շրջանում հարաբերությունները հակահիտլերյան Մեծ եռյակի ներսում հարբ չեն եղել: Այդ հարաբերությունները բնորոշ է եղել կապալանաժամությունը, կողմերից յուրաքանչյուրը մտածում էր աշխարհի քարտեզն այնպես վերանվել, որ պատերազմի ավարտից հետո ինքն ունենա առավել գերակառյուղ դիրքեր, իսկ «դաշնակիցը» հետին պլան մղվի: Այդ միտումները բացահայտորեն դրսևորվեցին պատերազմի ավարտից հետո:

Պատերազմի ավարտից հետո ստեղծվեցին բոլորովին նոր քաղաքական և ռազմական իրողություններ: Տեղի ունեցավ միջազգային մասշտաբով ուժերի վերադասավորում և աշխարհի երկու առաջատար ու ամենահզոր պետությունները դարձան ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը:

Եթե մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը միջազգային բառերաբանում ամենաառաջատար դերակատարումն ունեին Անգլիան և Ֆրանսիան, ապա պատերազմից հետո, խիստ թուլացած այդ երկրներն ամվերադարձորեն կորցրեցին իրենց երբեմնի հզոր դիրքերը և հարկադրված էին լինեց տեղը զիջել ԱՄՆ-ին: Արևմտյան-կապիտալիստական աշխարհի լի-դիր դարձավ ԱՄՆ-ը:

Մյուս կարևոր իրողությունը կայանում էր նրանում, որ սոցիալիզմը Երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միության տարած ռազմական հաղթանակների արդյունքում դուրս եկավ ԽՍՀՄ շրջանակներից և վերածվեց համաշխարհային համակարգի, իր մեջ ներառելով Արևելյան Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրներ: Այդ խմբավորման լիդերը դարձավ Խորհրդային Միությունը:

Այսպիսով, աշխարհի բաժանումը երկու հակադիր քաղաքական խմբավորումների, դարձավ իրողություն:

Այդ պահից սկսվում է դիմակադրությունը և առճակատումը ԱՄՆ-ի և Խորհրդային Միության կողմից գլխավորվող երկու խմբավորումների միջև: Այդ համակարտությունում ոչ ԱՄՆ-ը և ոչ էլ ԽՍՀՄ-ը, ինչքան էլ որ նրանք հզոր լինեին, չէին կարող գործել առանձին-առանձին:

Խորհրդային Միությունը պայքար սկսեց սոցիալիստական համակարգի հակադրարհային հաղթանակի համար՝ դաշնակից ունենալով Արևելյան Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական երկրները, Աֆիղյան, Ալբերիայում և Լատինական Ամերիկայում ծավալվող ազգային-ազատագրական շարժումները, ինչպես նաև սոցիալիզմն իրենց զարգացման քաղաքական ին-

այ հայտարարում մի շարք ավական և աֆիլիյան զարգացող երկրներ՝ Եգիպտոս, Միրիան, Հարավային Եմենը, Գանան, Գվինեան և այլն:

ԱՄՆ-ը պայքարում էր Խորհրդային Միության միջազգային դիրքերի հետագա ամրապնդման, սոցիալիզմի հետագա հաղթարշավի, համայն աշխարհի սոցիալիստական ճանճարի վերածելու դեմ, մի կողմից, և ձգտում համաշխարհային լիցերության և համայն աշխարհում զարգացման քաղաքական, հասարակական ու տնտեսական արևմտյան մոդելի հաստատմանը, մյուս կողմից:

Իր այդ քաղաքականությունն իրականացնելիս, ԱՄՆ-ը հենվում էր իր սեփական քաղաքական, տնտեսական և ռազմական հզոր ներուժի վրա, որը բոլոր պարամետրերով մի քանի անգամ գերազանցում էր Խորհրդային Միությանը, և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու արևմտյան այլ երկրների լիակատար համագործակցության ու աջակցության վրա:

Ռոբեմ, պատերազմից հետո սկսված դիմակայությունը ոչ թե երկու երկրների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ընթացող առանկատում էր, այլ համաշխարհային, երկու տարբեր հասարակական-քաղաքական կարգերի հակամարտություն:

Այդ նոր քաղաքական իրողությանը պետք է ավելացնել ևս մեկ կարևոր իրողություն: Գա սառը պատերազմի սկիզբն էր, որը որպես այդպիսին նոր երևույթ էր միջազգային հարաբերություններում և պատմության մեջ:

Սառը պատերազմի սկիզբը ընդունված է համարել Մեծ Բրիտանիայի մահիկն վարչապետ, քառերորդ դարի ամենաակնավոր պետական գործիչներից մեկի՝ Ուինսթոն Չերչիլի ելույթը Ֆուլտոնում, Վաշինգտոնի քաղաքամերձ ավանում, 1946թ. մարտի 5-ին: Երբ իր այդ ելույթի մասնակց, որին ներկա էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Հարի Տրումենը, Առաջին ամառից հենցերեց խորհրդային վտանգի մասին թե՛ք՝ հչելով, որ աշխարհին սպառնում է նոր՝ երրորդ համաշխարհային պատերազմի, կոմունիզմի արտահանման և աշխարհի բոլոր երկրներում սոցիալիստական տոտալիտար կարգերի հաստատման վտանգը, որի աղբյուրը Խորհրդային Միությունը և միջազգային կոմունիզմն է: Ընդգծելով, որ դա մահացու վտանգ է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և արևմտյան երկրների ու դեմոկրատական արժեքների համար, նա կոչ արեց ԱՄՆ-ին և արևմտյան երկրներին միավորվել և ստեղծել արևմտյան պետությունների դաշինք, Խորհրդային Միության նկատմամբ վարել կոշտ քաղաքականություն և, եթե հարկ լինի, կիրառել աներկկան միջուկային զենք:

Խոսելով միավորվելու մասին, Չերչիլը նկատի ուներ ոչ թե համատեղ դեկլարացիաների ընդունումը, այլ քաղաքական, տնտեսական և ռազմական ջանքերի միավորումը և համապատասխան կառույցների ստեղծումը:

Պատահականություն չէր, որ Չերչիլի ելույթին, որը ծրագրային բնույթ ուներ, ներկա էր ԱՄՆ-ի պրեզիդենտը: Նրա ելույթում արտահայտված դրույթները լրիվ պաշտպանություն գտան Հարի Տրումենի, ինչպես նաև արևմտյան բոլոր առաջատար երկրների կողմից:

Առանձին կամ հատուկ դաշնային կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և արևմտյան մի շարք երկրներ պայմանավորում էին նաև այն հանգամանքով, որ նրանց կարծիքով, նրանց համար ցանկալի քաղաքականությունը՝ գուպի Խորհրդային Միության ու սոցիալիստական երկրների ագրեսիվ ծավալապաշտական քաղաքականությունը և համապատասխան ու հուսալի պատվար ստեղծելը հասարակարհային տիրապետության հասնելու ԽՍՀՄ-ի նկրտումների դեմ, հնարավոր չէր իրականացնել Միավորված ազգերի կազմակերպության կազմակերպում՝ առնվազն երկու պատճառով: Առաջին, ՄԱԿ-ը չուներ իր սեփական ռազմական ուժերը, որն անհրաժեշտության դեպքում հնարավոր լիներ գործադրել ընդդեմ Խորհրդային Միության աշխարհակալ քաղաքականության: Երկրորդ, ՄԱԿ-ում գործում էին բոլորովին այլ սկզբունքներ, որոնցից ամենակարևորը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների վետոյի իրավունքն էր և միաձայնության սկզբունքը, որի պայմաններում պատերազմի և խաղաղության հարցերում պահանջվում էր նրանց կոնսենսուսը: Այդ պատճառով ՄԱԿ-ը հնարավոր չէր օգտագործել Խորհրդային Միության դեմ, քանի, որ նա իր դեմ ուղղված գործողությունների պարագայում, բնականաբար, կօգտվեր վետոյի իր իրավունքից:

Նույն պատճառաբանությամբ Խորհրդային Միության և նրա դաշնակից սոցիալիստական երկրների համար հնարավոր չէր ՄԱԿ-ն օգտագործել ընդդեմ ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության հասնելու քաղաքականության դեմ:

Գ-րանից հետևում էր, որ ԱՄՆ-ին և արևմտյան մյուս երկրներին անհրաժեշտ էր բոլորովին այլ սկզբունքների վրա հիմնված ռազմական կազմակերպություն, որը կախված չլիներ ՄԱԿ-ից և գործեր ազատ՝ համաձայն իր սեփական սկզբունքների, կանոնադրության և ծրագրերի:

Այսպիսով, նոր իրողությունների պայմաններում, երբ արդեն հստակ էին դարձել աշխարհի բաժանմունք երկու միջնաճյուղի բուկները, երբ բավ էր տանում սառը պատերազմը և երբ Խորհրդային Միության քաղաքականությունը արևմտյան աշխարհին ընկալում էր մահացու վտանգ իր գոյության համար, ավելի ու ավելի էր հաստատման արևմտյան տերությունների միավորման և մեկ ռազմա-քաղաքական կազմակերպություն ստեղծելու գաղափարը:

Այդ գաղափարը, շատ շանցած, բյուրեղանալով, մարմնավորվեց Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպության՝ ՆԱՏՕ-ի ստեղծման մեջ, որը հիմնվեց 1949թ. ապրիլի 4-ին:

Դրան հաջորդեց Խորհրդային Միության և սոցիալիստական համագործակցության երկրների որոշումը՝ ի հակադրություն ՆԱՏՕ-ի, ստեղծել իրենց առանձին ռազմա-քաղաքական կազմակերպությունը՝ Վարշավայի պայմանգրի երկրների ռազմական կազմակերպությունը, որը տեղի ունեցավ 1955թ. մայիսի 14-ին:

Դրանով ավարտվեց աշխարհի բաժանումը երկու միմյանց բշնամի քաղաքական բլոկների և նրանց համապատասխան ռազմաքաղաքական կազմակերպությունների ստեղծման գործընթացը:

Սկիզբը: Պատմական ակնարկ

Ատլանտյան կանոնադրությունը

Թեպետ ՆԱՏՕ-ն պաշտոնապես ստեղծվեց միայն 1949 թվականին, նրա հիմքը կազմող Հյուսիսատլանտյան դաշինքն արդեն սաղմնավորվել էր դրանից մոտ մեկ տասնամյակ առաջ: Երկրորդ աշխարհամարտի սկզբին Անգլիան, ըստ չույթան, մեծապես հույսով չէր ուժերի վրա էր դրել: Երբ 1939 թվականին սկսվեց պատերազմը, 20 տարի առաջ Առաջին համաշխարհային պատերազմի դաշնակիցներին միայն Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան էին մնացել: Գերմանիան ու Խորհրդային Միությունը չհարձակման մասին համաձայնագիր էին ստորագրել, իսկ Ավստրիան, Չեխոսլովակիան ու Լեհաստանն արդեն նվաճված էին: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ի վերջո որոշեցին պայքարել և պատերազմ հայտարարեցին: Մակայն դեռ մեկ տարի էլ չէր անցել՝ ընկան Բելգիան ու Հոլանդիան: Անգլիան հրաշքով կարողացավ իր զորքերը վակուսացնել Գյունկերկից, իսկ որոշ ժամանակ անց ստիպված էր ականատես լինել, թե ինչպես են գերմանացիները մտնում Փարիզ: Մեկ ամիս էլ չէր անցել, երբ հուլիսին Գիտլերը բացեց բրիտանական ճակատը՝ սկսելով գիշեր-ցերեկ ռմբակոծել Լոնդոնը և այլ բրիտանական քաղաքներ, ինչը շարու-

նակվեց ամբողջ երեք ու կես ամիս: Հունաստանը պաշտպանելու ապարդյուն փորձից հետո մեկ տարի անց, 1941 թվականի աժոնանը, Բրիտանիան փորձեց հակահարձակ հասցնել Մացիստներին, հիմնականում Եգիպտոսում և Հյուսիսային Աֆրիկայում, սակայն Բրիտանիան դեռ միայնակ էր:

Այլևս նահանգի տեղ չունենալով՝ վարչապետ Ուինսթոն Չերչիլը գաղտնի հանդիպեց Ամերիկայի Նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտին: Հանդիպումը տեղի ունեցավ ծովի վրա, Ատլանտյան օվկիանոսում՝ Նոր Շոտլանդիայի (Nova Scotia) ափերի մոտ: Գերմանիան արդեն ներխուժել էր Խորհրդային Միություն, ուստի վերջինից օգնություն ակնկալելն անհիմատ կլիներ: Այն ինչ, դեռևս հայտնի չէր, թե արդյո՞ք Ատլանտիկ կարելի էր դաշնակից համարել: Չնայած Ամերիկայի պաշտոնապես հայտարարված չեզոքությանը՝ կասկած անգամ չկար, որ եթե նա այնուամենայնիվ որոշեր պատերազմի մեջ մտնել, ապա դա կաներ որպես Անգլիայի դաշնակից, ոչ թե Գերմանիայի: Եվ այսպես, երկու երկրների առաջնորդները համդիպեցին ծովում, ռազմա-նավի վրա, ծայրահեղ գաղտնիության պայմաններում, որպեսզի ընձարվեն ոչ միայն Անգլիային աջակցելու հնարավորությունները, այլև որպեսզի հիմք դնեն հետպատերազմյան խաղաղության ամրապնդման գործընթացին: Այս հանդիպման արդյունքն Ատլանտյան կանոնադրությունը՝ ու «Լենդ-լիզի» ծրագիրն էր, ըստ որի ամերիկյան կործանիչները

2 Կանոնադրության ամբողջությամբ ծանոթանալու համար տե՛ս Գալիլեյան 1:

պատերազմական գործողություններում պետք է աջակցեին բրիտանացիների (տիխնիկայան Գերմանիան ևս կարող էր օգտվել այս ծրագրից իր շահերն առաջ տանելու համար, սակայն դա անհավանական էր):

Ալուանտյան կանոնադրությունը ներկայացնում էր ութ սկզբունք, որոնք այդ երկու պետություններն օգտագործելու էին կարգավորելու իրենց հարաբերությունները միմյանց և այլ երկրների հետ ինչպես ներկայում, այնպես էլ հետպատերազմյան ժամանակահատվածում: Այդ սկզբունքները հետևյալն էին.

- պարտավորություն, որ զերծ կմնան այլ տարածքներ գրավելուց,
- պարտավորություն, որ ուժ չեն գործադրի տարածքային սահմանների փոփոխության համար, եթե չկա հանրային աջակցություն,
- ցանկություն, որ ազգերը ազատ ընտրությանը որոշեն կառավարման իրենց նախընտրած ձևը,
- ցանկություն, որ ոչ մի ազգ չդիտարկվի որպես ստորադաս կամ երկրորդ կարգի՝ անկախ պատերազմի արդյունքից,
- ցանկություն, որ հաստատվի տնտեսական համագործակցություն բոլոր երկրների հետ,
- հույս, որ բոլոր երկրները կազատվեն սպառնալիքների և կարիքների երկուսից,
- պարտավորություն, որ տեղաշարժված համար ծովային սահմանները բաց կլինեն բոլորի համար.

• համոզվածություն, որ ուժը պետք է մի կողմ դնել՝ որպես հակամարտությունների հարցման միջոց:⁴

Այս սկզբունքներով հետազայում պետք է կատարվեր ոչ միայն խաղաղության գործընթացը եվրոպայում, այլ նաև ՄԱԿ-ի ձևավորման գործընթացը պատերազմից հետո, իսկ այնպիսի ուժ՝ ԱՄՏՈ-ի կազմավորումը: Ասկայն հենց այս սկզբունքներն էլ հետազայում պատճառ պիտի հանդիսանային ԱՄՏՈ-ի և խորհրդային Միության միջև հակամարտությունների սրման համար: Վերջինս հետպատերազմյան ժամանակաշրջանում մեղադրվում էր ազգերի ինքնորոշման և սեփական կառավարությունը դնալու ազատության սկզբունքները ընդամենը մեջ, քանի որ այն գրավեց, ապա կոմունիզմ պարտադրեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների, ինչպես նաև Բալթյան հանրապետությունների:

Սիվալորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը

Երկրորդ աշխարհամարտից հետո որոշվեց ստեղծել համաշխարհային կառավարման մի ձարմին, որպեսզի այն միջնորդ հանդիսանա անհամաձայնությունների ժամանակ և աշխատի կանխել հակամարտությունները: Դա պիտի լիներ մի կազմակերպություն, որտեղ աշխարհի յուրաքանչյուր ազգ

հնարավորություն կունենար ներկայանալ՝ համոզված լինելով, որ իր մտահոգությունները չեն անտեսվի: Առաջին հանդիպումը տեղի ունեցավ Սան Ֆրանցիսկոյում, որտեղ էլ նախագծվեց ՄԱԿ-ի կանոնադրությունը: Կանոնադրության նախաքանում նշված են կազմակերպության նպատակները՝ խաղաղության պատնալիքների կամրում, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, արդարության և միջազգային իրավունքի խրախուսում, սոցիալական առաջընթացի և կյանքի որակի բարելավում:⁴ ՄԱԿ-ը հույս ուներ իրականացնել այս նպատակները՝ դրսևորելով հանդուրժողականություն, կառուցելով խաղաղություն և վերջինիս պահպանման համար միավորելով բոլոր մշտերը, հավաստելով, որ ուժի կիրառումն իրականացվի միայն խստագույն անհրաժեշտության դեպքում և խրախուսելով ստեղծապես հզոր պետությունների մտնկացել ամենի աղքատ երկրներին:⁵ Այս սկզբունքներն այնքան էլ չէին տարբերվում Ազգերի լիգայի կանոնադրությանը առաջ քաշվածներից, մի կանոնադրություն, որը զրվել էր 25 տարի առաջ՝ Առաջին աշխարհամարտից հետո:

Ազգերի լիգան՝ որպես կառույց, ծախուրվեց իր նպատակների իրականացման գործում, քանի որ չուներ ինդիվիդուալություն և ազդեցություն լծակներ: Առաջին աշխարհամարտը ցույց տվեց,

որ չնայած Ամերիկյան պատերազմին միջամտեց քավակալին ուշ, և, ի համեմատություն Բրիտանիայի և Ֆրանսիայի մասնակցությանն Մրևմտյան ճակատում, այդ միջամտությունը փոքրամասշտաբ էր, ԱՄՆ-ի տնտեսական և ռազմական հզորությունն ահում էր: Ազգերի լիգան նախագահ Կուդրո Վիլսոնի՝ հիղեալիխտակակա՝ 14 կետերից՝ միայն մեկն էր, որ ընդգրկվեց Վերսալի համաձայնագրում: Չնայած այդ քաղցրադառնական հաջողությանը՝ Կոնգրեսը մերժեց համաձայնագրի վավերացումը, այդպիսով զրեթե ի սկզբանե անկարողության դատապարտելով Ազգերի լիգային: Քանզի կազմակերպությունը միտումնավոր կերպով իրաժեշտել էր ազդեցության լծակներից (Լիգան չէր ցանկանում սկսել մեկ այլ պատերազմ), յուրաքանչյուր երկիր, որը խախտել էր Լիգայի կանոնակարգը, կարող էր պարզապես հանգիստ դուրս գալ կազմակերպության կազմից: Այդպես վարվեց ճապոնիան, երբ նրան բննադատեցին Սանջուրիայի բռնազավթման համար: Դրան հետևեց Գերմանիայի կողմից Չեռնոսի ապստամբականացված գոտու գրավումը: Խորհրդային Միությունը հետագվեց Լիգայից Բալթյան հանրապետությունները Միությանը բռնակցելու համար: Այն հարկ անգամ չհամարեց խորհրդայնացել Լիգայի հետ հետագա ընդլայնման հնարավորությունների շուրջ:

Որպեսզի Սիվալորված ազգերի կազմակերպությունը գործունակ լիներ, անհրաժեշտ էր վերացնել այս խղճաբողոտները: Բարոյական իրավունքի հարցը հեշտ էր լուծել: Անմիջապես պատե-

³ Ալուանտյան կանոնադրություն, օգոստոսի 24, 1947թ.:

⁴ Առաջաբան, ՄԱԿ-ի կանոնադրություն, Սան Ֆրանցիսկո, հոկտեմբերի 24, 1945թ.: Կանոնադրության ամբողջական տեքստին ժամանակակից համար տե՛ս Գալեյվալո է:

⁵ Առաջաբան, ՄԱԿ-ի կանոնադրություն:

րզզմից հետո պարզ էր, որ Միացյալ Նահանգները դարձել էին աշխարհի ամենահզոր երկիրը: Ինչպես նախորդ պատերազմի ժամանակ, այս անգամ ևս նա բավական հասպտեղ՝ պատերազմի մեջ մտնելով այն պահին, երբ սկսվեցին հարավրվել վերջինիս տնտեսական և ռազմական ուժը, իսկ Գերմանիան կամ ճակատնեմ արդեն ոչինչ չէին կարող անել՝ կասեցնելու դաշնակց ուժերի հարթարշավը եվրոպայում և հարդազովկիանոսյան տարածաշրջանում: Ավելին, Ամերիկան ատու մային օուսը ուներ: Խորհրդային Միությունը դեռևս պետք է տեղծեր այդ օուսնը՝ այսպիսով դառնալով աշխարհում երկրորդ գերտերությունը: Բացի այդ, նա դեռևս դարձանում էր պատերազմի վերջերը, չէ՛ որ նա կորցրել էր քվով ավելի շատ երիտասարդներ, քան բոլոր այլ դաշնակցիները միասին վերոհրատ: Այսպիսով, միայն այն փաստը, որ ԱՄՆ-ն համաձայնվեց միասնա ՄԱԿ-ին, բավական էր որպես առաջին քայլ հաստատելու այդ կազմակերպության բարոյական իրավունակությունը: Գիմնադրումից յոթ տարի անց, 1952 թվականին, կազմակերպությունը վերջնականապես հանգրվանեց Նյու Յորքում՝ հանրաճանաչ գործարարներից մեկի կողմից՝ Գնդիաբերված տարածքում: Միացյալ Նահանգների մասնակցությունը, մշտական նստավայրի և այնպիսի կառուցվածքի անկախությունը, որը հնարավորություն էր ընձեռում յուրաքանչյուր պետության ներկայանալ կառավարող մարմնում՝ Ամերիկացիության խորհրդում, քավարար պայմաններ էին, որպեսզի լրացվեր բարո-

յական իրավունքի պակասը, ինչը բնորոշ էր նախորդ կազմակերպությանը:

Ազգեցության լծակների կայացումը ևս անհրաժեշտ էր, եթե ՄԱԿ-ը պատակ ուներ կիրառել իր նոր հաստատված բարոյական իրավունքը: Կազմակերպությունը տրամադրում էր «խաղաղապահ ուժեր», որոնք կարող էին տեղակայվել «խոսվախոչ տարածքներում»: Այս գիմունքը իրավասու չէր նախաձեռնան որևէ ռազմական գործողություն: Նրան քույակաբովում էր միայն վերահսկել իրադրությունը և անհրաժեշտության դեպքում պաշտպանվել: Այն երկու դեպքերից առաջինը, երբ ՄԱԿ-ի կողմից լիազորված զորքերին թույլ էր տրվել նախաձեռնել հարձակողական գործողություններ, 1950 թվականին էր, երբ Գյուսիսային Կորեան զավթեց Զարավայինը: Այս քաջառությունը հնարավոր եղավ խորհրդային Միության կողմից Ամերիկացիության խորհուրդը բոյկոտելու շնորհիվ: Երկրորդ քաջառությունը Պարսից ծոցի առաջին պատերազմին հավանություն տալն էր, որը հնարավոր դարձավ խորհրդային Միության փրկման շնորհիվ: 1950 թվականի ֆիտա-կոյից հետո, երբ խորհրդային Միությունը լեթե խորհրդի հնաւը, վերջինս այլևս երբեք չէր որոնք բոյկոտել այն:

Ազգեցության լծակներն առաջել ապահովելուն ուղղված ևս մեկ քայլ էր ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը: Այդ հոդվածը հնարավորություն էր ընձեռում ցանկացած պետության, հավաքական անվտանգության և պաշտպանության նկատառումներից

կենելով, միավորվել այլ երկրների հետ: Ենամատիպ կազմակերպվածքներից թույլատրվում էր պաշտպանական գործունեություն ծավալել ինքնուրույն, ստանց ՄԱԿ-ի հավանությունը ստանալու՝ պայմանով, որ առաջին իսկ հնարավորության դեպքում Ամերիկացիության խորհրդին տեղյակ կպահեն իրենց մտադրությունների մասին: Ելնելով այս հոդվածով նախատեսվող հնարավորությունից և հիմնվելով վերոհիշյալ սկզբունքների վրա՝ կազմակերպվեց Գյուսիսատլանտյան դաշինքի հնարավորությունը:

Բրյուսելի համաձայնագիրը

1948 թվականին, ՆԱՍՕ-ի ստեղծումից մեկ տարի առաջ, նմանատիպ համաձայնագիր կնքեցին Բելգիան, Ֆրանսիան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդներն ու Սեե Բրիտանիան: Նրանք այդ քայլին դիմեցին դիմագրավելու համար գերանական հնարավոր ազդեցության դասեր բաղելով նախորդ երկու սպիտահամարտերում անխուսափելի վտանգը անտեսելու իրենց իսկ փորձը: Այս փաստաթղթում նշված էր, որ այն ստորագրած կողմերը համաձայնվում են աշխարհում միասին՝ Եվրոպայի և քրիտանրապես աճողը աշխարհի խաղաղությունն ամրապնդելու նպատակով, իսկ եթե այս գործունեությունը ծախսովի, ապա կպահովվի փոխաբերում պաշտպանություն: Հիմնվելով

51-րդ հոդվածի վրա՝ այս համաձայնագրի կնքումը ենթադրում էր, որ մի քանի երկրների դաշինքը, որի առաջնությունը փոխարտի աջակցությունն ու պաշտպանությունն էր լինելու, բավական կլինի ցանկացած հնարավոր ազդեցորին տարհանալու և ստիպելու քունության չդիմել:

Գյուսիսատլանտյան դաշնագիր

Այլատլանտյան կանոնադրության, Միավորված ազգերի կանոնադրության և Բրյուսելի համաձայնագրի հիմքում ընկած սկզբունքները համախմբվեցին 1949 թվականի ապրիլին Վաշինգտոնում կնքված Գյուսիսատլանտյան դաշնագրի մեջ (այն երբեմն անվանում են պարզապես Վաշինգտոնի դաշնագիր): Ինչպես Բրյուսելի համաձայնագիրը, սա նույնպես բխում էր ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածից և ուղղված էր նրան նպատակի իրագործմանը, քայս աղյուս անդրադաճալույան մաշտաբով: Գերմանական միլիտարիզմին կարեբերող մասը բաց թողնելով՝ կարելի է առել, որ այդ երկու դաշնագրերը էապես նման բնույթ ունեն. երկուսն էլ նպատակ ունեն հնարավորության դեպքում հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով, պահպանել ազգային անվտանգությունը, ծռտել անորոշ երկրների տնտեսական և ինստիտու-

7 Ամերիկյան տեքստի ծանոթանալու համար տես Դավելված 1:

7 Ամերիկյան տեքստի ծանոթանալու համար տես Դավելված 1:

ցիոնյալ զարգացմանն ու ապահովել փոխադարձ պաշտպանություն, եթե հարձակում գործվի անդամներից որևէ մեկի վրա:

Դաշնագրի մշակման ժամանակ կողմերը կարևորեցին հատկապես մի կետ, նրանք ցանկանում էին հատկացնել, որ կազմակերպությունը թեև բնութրվո՞ւ ռազմական էր, այնուամենայնիվ այն հարձակողական չէր և ուղղված չէր որևէ այլ պետության դեմ: Դաշնագրի նախաբանի առաջին իսկ տողում նշվում է, որ այն աջակցում է Միավորված ազգերի կազմակերպությանը և հույս է հայտնում, որ համաձայնագրի պետությունները կշարունակեն խաղաղ գոյակցությունը աշխարհի մնացած բոլոր երկրների հետ: Կազմակերպության առաջնային նպատակներից էր աջակցությունը ազատությանը և ժողովրդավարությանը (այս իսկ պատճառով խորհրդային Միությունը չընդգրկեց համաձայնագրի մեջ): Կազմակերպության կանոնադրության մի քանի հոդվածներ արժանի են առանձնակի ուշադրության: Գողված 2-ը մասնավորապես պարտավորեցնում է դաշնագրի անդամ երկրներին հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով և ամրապնդել ու զարգացնել այն հաստատություններն ու ռազմավարությունները, որոնք փոխադարձորեն շահավետ են անդամ երկրների համար: Իսկ հոդված 7-ում նշվում է, որ անդամ պետությունների առաջնային պարտավորվածությունը ոչ թե ՆԱՏՕ-ի, այլ ՄԱԿ-ի առջև է:⁸

Գողված 5-ը, թերևս, ամենակարևորն է, քանի որ այն նախանշում է դաշնագիրը ստորագրած կողմերի փոխադարձ պաշտպանության հիմքը: Այնտեղ ասվում է, որ «զինված հարձակումը մեկ կամ ավելի պետությունների վրա կզիտարակվի որպես հարձակում բոլորի վրա», և որ «յուրաքանչյուր պետություն կաջակցի այն մեկ կամ մի քանի պետություններին, որոնք ագրեսիայի են ենթարկվել»:⁹ Թեև այս հոդվածը հազվադեպ է կիրառվել (այն հիմք հանդիսացավ 2001 թվականի սեպտեմբերի 11-ից հետո ՆԱՏՕ-ի կողմից աջակցվող Աֆղանստանի գրավման գործընթացը կազմակերպելու համար), սակայն դրա շարտարանը և որոշակի բառերի ու արտահայտությունների կիրառումը, ինչպես օրինակ, միջուկային զենք, մի շարք այլ գործոնների հետ միասին նշանակալից դեր ունեցավ, որպեսզի կանխվի «սառք» պատերազմի վերածումը մի ավելի սարսափելի արեւոյ:

ՆԱՏՕ-ն սկզբնապես ուներ 12 անդամ: 1980-ականների վերջերին միացան ևս չորսը, իսկ դրանից հետո ևս տասը: Այսպիսով, ներկայումս ՆԱՏՕ-ն ունի քսանվեց անդամ¹⁰: Կազմակերպության մնան ընդլայնումը թույլատր-

վում էր ըստ 10-րդ հոդվածի, որը նաև նախագծում է այդ գործընթացը: Գողվածներից վերջինը, որն արժանի է հիշատակման, 13-րդ հոդվածն է, ըստ որի, ելնելով ներքին պատճառներից, պետությունները կարող են դուրս գալ այդ դաշինքից: Մինչ օրս Ֆրանսիան միակն է, որ օգտվել է այս հոդվածից: 1966 թվականին նա դուրս եկավ դաշինքի ռազմական կառույցից, թեև շարունակեց քաղաքական և դիվանագիտական կապեր պահպանել կազմակերպության հետ: Ի հավելումն անդամ երկրների՝ կան քսան այլ պետություններ, որոնք մտնում են «Գործընկերություն համուն խաղաղության» ծրագրի մեջ և ներկայանում են եվրատլանտյան գործընկերության խորհրդում (ԵԱԳԽ):

ընդլայնված տարածաշրջանում հավանական ամվտանգությունն ապահովելու նպատակով: Այս բոլոր երկրները զինուժ են տրամադրել՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի նախածեռնություններին (Քուսնիա, Կոսովո, Մակեդոնիա, Աֆղանստան) և օգտագործում են ԵԱԳԽ-ն՝ որպես տարածաշրջանային հակամարտություններն առանց ռազմական միջամտության լուծելու ֆորում: Բացի այդ, Մեծնավոր Արևելքի և Գլոսիասային Աֆրիկայի մի շարք երկրներ՝ Մավրիտանիան, Մարոկկոն, Ալժիրը, Թունիսը, Եգիպտոսը, Գորդանանն ու Իսրայելը մտնում են այսպես կոչված, «Միջերկրածովյան երկխոսության երկրների» շարքը, որը խաղաղության ու ամվտանգության հարցերով խորհրդակցում է ՆԱՏՕ-ի հետ:

⁸ Գողված 5, Գլոսիասային խաղաղության համաձայնագիր: 10-1949 - Չեկոսլ, Կանադա, Դանիա, Ֆրանսիա, Իսլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Լիտվեյանցիներ, Նորվեգիա, Գերտուգալիա, Միացյալ Ցագակրություն, Միացյալ Աստանցներ, 1952 - Գրանատան և Ցուրցիա, 1955 - Արևմտյան Գերմանիա, 1982 - Իսպանիա, 1999 - Չեխիայի Հանրապետություն, Գունգարիա, Լեհաստան, 2004 - Քուլարիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Սլովակիա, Սլովենիա, Ռումինիա:

⁸ Ամբողջական տեքստին ծանոթանալու համար տե՛ս Գալվեյված 1:

ԳԼՈՒԽ II.

ՀՅՈՒՄԻԱՍՏԱՆՏԵՑԱՆ ԴԱՇԽԵԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՆՈՒՄԸ

1949թ. ապրիլի 4-ին, ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնում, ԱՄՆ-ը, Կանադան և Եվրոպական 10 պետություններ՝ Բելգիան, Դանիան, Իսլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Միացյալ Թագավորությունը, Նիդերլանդները, Նորվեգիան, Պորտուգալիան և Ֆրանսիան, ընդամենը 12 պետություն, ստորագրեցին Հյուսիսատլանտյան պայմանագիրը, որով հիմնադրվեց այդ երկրների դաշնային կազմակերպությունը՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը՝ ՆԱՏՕ-ն:

Կազմակերպության ստեղծման նպատակն էր հետպատերազմյան շրջանում ապահովել Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի հավաքական անվտանգությունը: Միջազգային քաղաքականության համար 1949 թվականը նշանակալից տարեթիվ էր: Չինաստանում մատականները պարտության մատնեցին Չան Կայշիի գոմիդոնական ազգայնականներին և հոկտեմբերի 1-ին Չինաստանը հռչակեցին Ժողովրդական Հանրապետություն: Եվրոպայում ընդամենը մեկ շաբաթ անց, հոկտեմբերի 7-ին, հայտարարվեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ձևավորման մասին, որով ի դերս ելավ երբեմնի դաշնակիցների՝ չորս մասի բաժանված գերմանական ազգը միասնական պահպանելու որևէ հույս: Դրանից առաջ՝ օգոստոսի 29-ին, ԽՍՀՄ-ը միջուկային փորձարկումներ էր կատարել: Արևմտաքի երկրների համար «առջ» պատերազմն, ըստ էության, արդեն պաշտոնապես սկսվել էր, և ՆԱՏՕ-ն դարձավ ԱՄՆ-ի և արևմտաեվրոպական երկրների դաշինք ընդդեմ կոմունիզմի:

Սառը պատերազմը, փաստորեն, պետք է ընթանար ոչ թե Եվրոպայի ռազմաճակատներում, այլ երբորդ երկրների լնճներում ու ջունգլիներում՝ այսպես կոչված «միջուկորդավորված պատերազմների» տեսքով: Կորեան առիթ հանդիսացավ, որպեսզի Արևմտաքն սկսի վախենալ կոմունիզմի տարածմանից ու հնարավոր գերիշխանությունից: Այս գագաթում առավել սրվեց 1955 թվականին՝ Վարշավայի համաձայնագրի կնքումից հետո: Ելնելով այդ մտավախություններից՝ 1964-1972թթ. ԱՄՆ-ը ներխուժեց Վիետնամ և հեռացավ այնտեղից՝ հսկայական կորուստներ կրելուց հետո միայն: Հասկանալով, որ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի դեմ պատճառալիքները միակողմանի չեն, 1971 թվականին ԽՍՀՄ-ի և Չինաստանի հետ ԱՄՆ-ի հարաբերություններում վերվածության թուլացում նկատվեց: Հաջորդ տասնութ տարիների

ընթացքում մրցակիցների միջև փոխըմբռնումն ու խաղաղ հարաբերությունները գնալով զարգանում էին և լրջորեն վտանգվեցին միայն 1979 թվականին ԽՍՀՄ-ի Աֆղանստան ներխուժման հետևանքով: 1989 թվականին փլուզվեց Բեռլինի պատը, իսկ մեկ տարի անց Գերմանիան վերամիավորվեց: Բեռլինի պատի փլուզումից երկու տարի անց լուծարվեց Վարշավայի համաձայնագիրը, և սկսվեց Խորհրդային Միության անկումը, բնական վերջնականապես փլուզվեց միայն 1991-ին:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար Խորհրդային Միության վերահսկողությունից ձեռքազատվելը դժվար է լիովին խաղաղ գործընթաց անվանել: Որոշ երկրների հաջողվեց նախկին կապերը խզել առանց վայրիվերումների, ինչի վառ օրինակն է Չեխոսլովակիայի բաժանումը երկու անկախ պետությունների, մյուսների մոտ, սակայն, դա չտեսցվեց: Խռովությունները մախկին Հարավսլավիայում և Բալկաններին ուղջ տարածքում շարունակվեցին մի ամբողջ տասնամյակ: Նման հանգամանքներում կոմունիզմից պաշտպանվելու ՆԱՏՕ-ի դերը փոխարինվեց իր իսկ նոր «քակում» խաղաղության ապահովելու առաքելությամբ: 1990-ականներին և վաղ 2000-ականներին ՆԱՏՕ-ն նշանակալից դեր խաղաց Իսրայելի, Կոստոյի և Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Համալստեպետության կոնֆլիկտների հարթման գործընթացում:

Ի սկզբանե ձևավորվելով որպես ռազմական դաշինք՝ 1956 թվականի Մոսկվան ճգնաժամը ստիպեց ՆԱՏՕ-ին ընդլայնել իր դերը նաև դեպի «ափսարական քաղաքականություն և դիվանագիտություն»: Կազմակերպության ներկա առաքելությունը ներառում է թուր այս դերերը, և քանի որ ՆԱՏՕ-ի ուժերը մասնակցում են Աֆղանստանի խաղաղարար առաքելությանը, քաղաքական ջանքեր են գործադրվում անդամակցության ընդլայնման ուղղությամբ, ինչպես նաև տարբեր ենթակառուցվածքների («Գործընկերություն հանդեպ խաղաղության», Եվրասիական գործընկերության խորհուրդ) միջոցով քաղաքական գործընթաց է ծավալվում, որի նպատակն է սպակցել համագործակցության ընդլայնմանն ու ընդհանուր անվտանգությանը:

Վազմակերպության կառուցվածքը

Հյուսիսատլանտյան դաշնագիրը մասնավորեցնում է, որ կազմակերպությունը կզիջավորի անդամներից կազմված համամատուցող, որտեղ թուր անդամները հավասարապես ներկայացված կլինեն: Այդ համամատուցողին կը վերապահված որոշել, թե կազմակերպության գործադիր մարմինն ի

վերջո ինչպիսի կառուցվածք կունենա: Ի վերջո, Հյուսիսատլանտյան խորհուրդը հանգեց կանոնակարգված պաշտոնակարության մեխանիզմին, որով կառավարվելու էր դաշինքը: ՆԱՏՕ-ի տեղեկատու մասնավորեցմուն է կառուցվածքի մանրամասները: Պետք է նշել, որ այն զգալի փոփոխություններ է կրել 1949 թվականից ի վեր, մինչև ստացել է ներկայիս տեսքը: Ստորև ներկայացվում է ուղղակի հակիրճ մի ակնարկ կազմակերպության կառուցվածքի մասին: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տևս հավելվածում ներկայացված կազմակերպչական կառուցվածքի սխեմաները, որոնք պատրաստվել են ՆԱՏՕ-ի կողմից:

Կազմակերպությունը գլխավորում է Հյուսիսատլանտյան խորհուրդը: Այստեղ ներկայացվում են բոլոր անդամ երկրները՝ յուրաքանչյուրը մեկ ձայնի իրավունքով: Որպեսզի ի կատար ածվի որևէ միջանտություն կամ այլ գործողություն, Խորհուրդը պետք է միաձայն քվեարկի դրա օգտին:¹³ Այս պայմանը կազմակերպությանը պարտավորեցնում է քակլականչալի սպառաջյոցներ տրամադել առ այն, որ ռազմական գործողություններն անհետևանքի է են: Սա թույլ է տալիս կանխել ռազմական կամ այլ տեսակի միջանտություն կատարելու որևէ քայլ, որը չունի պետությունների աջակցությունը: Նմանառիպ իրավասություն ունեն մաս պաշտպանության պլանավորման և միջուկային պլանավորման համձնաժողովները, թեև դրանք ենթարկվում են Խորհրդին: Այս կատայցներից անկախ գործում է ռազմական համձնաժողովը, որը պատասխանատու է ռազմական գործողությունների կազմակերպման և իրականացման համար: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի դեպատանակած աստիճան և կարող է ունենալ դիվանագիտական անձնակազմ, որին թույլատրվում է օգտվել ցանկացած դեպատանատան աշխատակազմին հասուկ իրավունքներից և արտոնություններից:

Պաշտպանության պլանավորման համձնաժողովն աշխատում է անդամ երկրների հետ՝ որոշելու համար, թե վերջիններս ինչպես կարող են աջակցել կազմակերպությանը և ինչ դերում: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում, եթե երբ և ինչքան գորք տրամադրի ՆԱՏՕ-ին, միևնույն ժամանակ ՆԱՏՕ-ն իրողորում է, որպեսզի վերջիններս, նախքան որոշում կայացնելը, հաշվի առնեն նաև ընդհանուր կարիքը: Համձնաժողովն այնուհետ որոշում է, թե որքան է ընդհանուր կարիքը և ովքեր կարող են լավագույնս աջակցել դրա բավարարմանը:¹⁴ Միջուկային պլանավորման համձնաժողովը, ինչպես ցույց է տալիս անվանումը, զբաղվում է միջուկային քաղաքականության իրականացմամբ: Որպեսզի կազմակերպությունը միասնական հանդես գա, այս համձնաժողովում ներկայացված են և միջուկային, և ոչ-միջուկային

պետությունները, չնայած այն փաստին, որ միայն սահմանափակ թվով պետություններ ունեն միջուկային կարողություններ (մասնավորապես ԱՄՆ-ն և Միացյալ Թագավորությունը): Ըստ հաստատված քաղաքականության՝ միջուկային զենք կարելի է օգտագործել միայն որպես հարձակման խտրանիչ միջոց, այդ իսկ պատճառով այն ուղղված չէ որևէ երկրի կամ տարածքի դեմ: 1990-ականների սկզբին սպառազինությունների կրճատումից ի վեր առկա զինամթերքը հինմակամում օդային և ստորջրյա օգտագործման է ի տարբերություն նախկինում օգտագործվող անջարժ և շարժական կայաններից արձակվող միջնայրջամաքային հրթիռների:¹⁵

Կան մաս 35 ենթահանձնաժողովներ, որոնք զբաղվում են, օրինակ օդային պաշտպանության, տնտեսության, ենթակառուցվածքների և պահուցների հարցերով: Սրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է գլխադասային հանձնաժողովներին, որոնք կայացնում են վերջնական որոշումները: Իսկ երբ որոշումներն այլևս կայացված են, ապա գլխավոր քարտուղարի և նրա աշխատակազմի պարտականությունն է ապահովել այդ քաղաքականությունների իրականացումը: Այս գործընթացն ի կատար է ածվում քարտուղարի ինճգ օգնականների և նրանց վարչությունների միջոցով (աջակցություն պաշտպանությանը, պաշտպանության պլանավորում և գործողություններ, քաղաքական հարցեր, գիտական և շրջակա միջավայրի պաշտպանության հարցեր և անվտանգության, ներդրումների, վարչարարության և քաղաքացիական արտակարգ իրավիճակի նախագիծում):¹⁶ ՆԱՏՕ-ի ռազմական գործունեությունը կառավարում է ռազմական համձնաժողովը՝ գործող հրամանատարների և այլ աշխատակազմի միջոցով, ովքեր ռազմավարական որոշումներ են կայացնում: Թեև Ռազմական համձնաժողովը կատարում է Առլանտյան խորհրդի համձնաքաղաքականները, նրան, այնուամենայնիվ, որոշակի անկախություն է տրված, որպեսզի ճգնաժամի կամ հակամարտության ժամանակ, հարկ եղած դեպքում, այն արագ և արդյունավետ որոշումներ կայացնի:¹⁷

11 Դեղված 9 և 10, Դյուսիսատլանտյան դաշնակից:
12 ՆԱՏՕ-ի տեղեկատու, էջ 156-157:

13 ՆԱՏՕ-ի տեղեկատու, էջ 160-161:

14 ՆԱՏՕ-ի տեղեկատու, էջ 519-521:

15 ՆԱՏՕ-ի տեղեկատու, էջ 522-523:

Անդրադաշտային հարաբերություններ. ակնարկ

Հյուսիսային Ամերիկայի և եվրոպայի հարաբերությունները երկար և հետաքրքիր դրվագներով հարուստ պատմություն ունեն: Միշտ չէ, որ դրանք լավ ժամանակներ են ապրել, բնական վերջին հարյուրամյակում դրանք հիմնականում կարելի է դրական գնահատել: Չնայած 18-րդ և 19-րդ դարերում ՄՄՆ-ի և Անգլիայի միջև հարաբերությունները նշանակալից մի քանի պատերազմներով, 1800-ականներից նրանց միջև կապերն ավելի ամրապնդվեցին: Առաջին աշխարհամարտում միացյալ ուժերով տարած հաղթանակը, ինչին նպաստեց նաև պատերազմի վերջին տարում ամերիկյան ուժերի մասնակցությունը, բոլի տվեց դիտարկել Միացյալ Նահանգներին իրեն բավի առնող երկիր: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Մեյնտայն օվկիանոսի տարբեր ակտերին գտնվող պետությունների միջև կապերն արդեն այնքան ամուր էին, որ միացյալ մայրամասնային շնորհիվ ակնկալել, որ Մեծ Բրիտանիան աջակցության համար պետք է դիմի Միացյալ Նահանգներին: Չնայած Ամերիկայի պաշտոնապես հայտարարված չեզոքությանը, աշխարհի մնացած երկրները կասկած անգամ չուներին, որ հնարավորության դեպքում նա կօգնի բացառապես Բրիտանիային: Արևմտյան կանոնադրության գաղտնի կնքումը և Լենդ-լիզի ներմուծումը հաստատեցին դա: Ինչ

վերաբերում է Կանադային, ապա լինելով Միացյալ Նահանգների հյուսիսային հարևանը և ունենալով նմանատիպ պատմություն ու մշակույթ՝ նա սերտ հարաբերություններ էր մեղավորել վերջինիս հետ: Կանադայի անկախությունը ի վեր՝ այդ երկու երկրներն ամենաազդեցիկ տնտեսական գործընկերներն էին: Երկրորդ համաշխարհային պատերազմում, 1944 թվականի հունիսի 6-ին Նորմանդիայի գրավման ժամանակ, Կանադան տրամադրեց 150 հազարանոց զորքի մեկ տասներորդ մասը և պատասխանատու էր Ջունո Բեյի գրավման համար:

Միացյալ Նահանգների հետ Ֆրանսիան լավ հարաբերություններ հաստատել էր նույնիսկ ավելի վաղ, քան Բրիտանիան ու Կանադան: ՄՄՆ-ի 1775-1783 թվականների Անկախության պատերազմի ժամանակ Ֆրանսիացիներն էին, որ ծովային աջակցություն տրամադրեցին Վիրջինիա նահանգի Յորքթաուն քաղաքի նվաճման ժամանակ գեներալ Քորնուելիսի բանակը շրջափակելու համար, ինչի արդյունքում վերջինս հանձնվեց և դրամով իսկ սկիզբ դրվեց պատերազմի ավարտին: Երբ 1812-1814 թվականներին Անգլիան և Ամերիկան մտրից պատերազմում էին ծովային տարածքների օգտագործման իրավունքների համար, ֆրանսիացի մասնավոր ռազմականներից մեկի կապիտան ժան Լաֆիտը կրկին ծովից օգնեց ամերիկացիներին, ինչպես նաև իր վրա վերցրեց մի զորախմբի իրանատարությունը 1815 թվականին Լոր Օդեյանի վճռորոշ ճակատամարտում: Երբ Ամերիկան դեռ ճորտապաշտ

պետություն էր, Լոր Աշխարհի դեսպաններ Բենջամին Ֆրանկլինը, Ջոն Ադամսը և Թոմաս Ջեֆերսոնը կարողացան հաջողությամբ իրենց կողմը գրավել փարիզյան հասարակությանը: 1964 թվականին ամերիկյան զորքերի միջատարությունը Կետանոմում Ֆրանսիային թույլ տվեց հետևում թողնել Դեղակաշինում վերջիններիս ծախսողած նախածոնությունները: Չնայած երկու աշխարհամարտերի ընթացքում ձեռք բերված սերտ հարաբերությունների՝ դրանք սրվեցին, երբ 1966 թվականին Շառլ դը Գոլը հայտարարեց, որ Ֆրանսիան հրաժարվում է մասնակցել ԼԱՏՕ-ի ռազմական առաքելության իրականացմանը, քանի որ դաշինքը թույլ տվեց Ֆրանսիային միջուկային զենք ձեռք բերել: Վերջերս հարաբերություններն էլ ավելի սրվեցին Աֆղանստանում և ԼԱՏՕ-ի դերի և Իրանում Պարսից ծոցի երկրորդ պատերազմի պատճառով, սակայն չնայած տարածայնություններին, այս երկու պետություններն, այնուամենայնիվ, մնում են համեմատաբար մոտ դաշնակիցներ:

Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները պատմականորեն այնքան էլ հարթ չեն զարգացել: 1066 թվականին նորմանների կողմից Բրիտանիայի նվաճումից մինչև 1815 թվականին Նապոլեոնի տիրապետության անկումը, այս երկու պետություններն անընդհատ պատերազմել են իրար հետ: 19-րդ դարի վերջին դրանք շատ արագ դաշնակիցներ դարձան՝ միասին նախագծելով, թե ինչպես կարելի է դիմակայել նկա-

ճողական Գերմանական կայսրության կողմից արդեն անդունապետի թվացող հարձակմանը: Առաջին աշխարհամարտի ժամանակ բրիտանական զորքերը առաջինն էին, որ օգնության հասան Ֆրանսիային, իսկ երկրորդ աշխարհամարտի ժամանակ վերջինն էին, որ հետագան Ֆրանսիայից, երբ մացախները գրավեցին երկիրը: Դժ Գոլը և Ազատ Ֆրանսիացիները տեղափոխվեցին Անգլիա, որտեղ շարունակեցին իրենց գործունեությունը մինչև 1944 թվականի հունիսի 6-ը, երբ դաշնակից զորքերի հետ միասին վերադարձան Ֆրանսիա:

Այս չորս պետությունների դաշինքը, ինչպես նաև նրանց դաշինքն ավելի փոքր երկրների հետ, 1949 թվականի զարմանք դարձավ ԼԱՏՕ-ի մեկավորման հիմքը: Այդ ժամանակվանից ի վեր հաճախ են դժվարին ժամանակներ եղել, սակայն ԼԱՏՕ-ի հիմքում ընկած այս հիմնական խումբը կարողացել է այնպիսի ամուր հենք տեսնել, որ դաշինքն անօր, և այսօր այս ունի քսանվեց անդամ ու քսան զործնկեր, այդ բոլոր այնպիսի պետություններ, որոնց հետ դաշինքը մի-ժամանակ ուղղակի անհնարին էր:

Գաշինքի ընդլայնումը

Ստեղծման օրվանից դաշինքն ընդլայնվել է մի քանի անգամ: Առաջին երեք ընդլայնումները նպատակ էին հետապնդում եզրագծերու այն՝ ընդդեմ ընդհանուր բշտամու, մեղսցիտ վերջին երկու ընդլայնումների նպատակն էր բարելավել անվտանգության և խաղաղապահ գործունեության գործընթացները: Առաջին երկու երկրները, որ դաշինքի ձևավորումից հետո՝ 1952 թվականին, միացան ՆԱՏՕ-ին, Հունաստանը և Թուրքիան էին: Այս երկու պատմական թշնամիներին միևնույն կառույցի մեջ ընդգրկելով՝ ՆԱՏՕ-ին հասցրվեց կանխել նրանց միջև հնարավոր բռնությունների ծավալումը: Եթե այս երկու պետություններին հնարավորություն տրվեր ՆԱՏՕ-ին միանալ միայն մեկին, ապա այդ մուտքը որոշակի խնդիրներ կառաջացներ նուրաստեղծ դաշինքի համար: Մակայն միաժամանակյա մուտքը թույլ տվեց որանց միջև խնդիրները լուծել դիվանագիտական հարթության մեջ: 1955 թվականին մուտքի թույլտվություն ստացավ Գերմանիայի Գաշնային Համալսարանը: Երկրորդ աշխարհամարտի ավերածություններից տասնապետության մեջ, ՆԱՏՕ-ն համոզվեց, որ գերմանական կառավարության և հասարակության մեջ զգալի փոփոխություններ են կատարվել, որպեսզի առանց վտանգելու խաղաղությունը նա կարողանա միանալ ակումբին: Բացի այդ, Արևմտյան Գերմանիան կարևոր դաշնակից կարող էր լինել կոմունիզմի դեմ պատերազմում, որը, բարեբախտաբար, այդպես էլ չսկսվեց: 1982 թվականին, մտատկրապես 30 տարի անց (ժամանակահատված, որի ընթացքում որևէ նոր անդամակցություն չգրանցվեց) ՆԱՏՕ-ին միացավ Իսպանիան:

Կոմունիզմի վերադարձից հինգ տարի անց ՆԱՏՕ-ն նախաձեռնեց Գ-4-ն, իսկ դրանից երեք տարի անց՝ ԵԱԳ-Խ-ն, ինչն էլ հենց ճանապարհ բացեց դեպի դաշինքի հետագա ընդլայնումը: ՆԱՏՕ-ի ավելի բաց քաղաքականության առավելություններից առաջինն օգտվեցին այն երեք պետությունները, որոնք առաջինը հրաժարվեցին սոցիալիստական ուղուց և որդեգրեցին ժողովրդավարության սկզբունքները՝ Չեխիայի Հանրապետությունը, Հունգարիան ու Լեհաստանը: 1997 թվականին հատուկ համաձայնություն կնքելով Ռուսաստանի և Ռուսաստանի և Ռուսաստանի հետ՝ ՆԱՏՕ-ի առջև այլևս բաց էր ճանապարհը դեպի Կենտրոնական և Արևելյան Եվրոպա: 2004 թվականին Բալթյան երկրները, Բուլղարիան, Սլովակիան, Սլովենիան և Ռումինիան ևս միացան դաշինքին:

Քանի որ ՆԱՏՕ-ն աստիճանաբար ավելի ու ավելի է մտնում Ռուսաստանին և, ըստ էության, արդեն հասել է նրա սահմաններին, գերխնդիրն այժմ այն է, թե ինչպես շարունակել ընդլայնումն առանց Ռուսաստանի գայտրոյքն առաջացնելու: Կոմունիզմի դարաշրջանի ավարտից հետո Ռու-

սաստանը վախճում էր, որ կհայտնվի ինքնապարփակ մի շրջանի մեջ՝ մեկուսացված Արևմտքի կողմից, թեև հենց ինքը՝ Ռուսաստանն է ձգտում արևմտյան ոճի ժողովրդավարության: Ռուսաստանի համար սա ազգային անվտանգության խնդիր է: Հասկանալի է, որ նրա համար ցանկալի չէ հայտնվել Եվրոպայում՝ շրջապատված նախկին դաշնակիցներով, որոնք ներկայում ավելի ամուր կապեր են հաստատել մեկ այլ կազմակերպության հետ: Ըստ ԱՄՆ-ում նախկին ռեսպոնսիվ Վլադիմիր Լուկինի. «Մենք ուժեղ ժողովրդավարություն ենք ցանկանում Առլանտյան Օվկիանոսից մինչև Կլադիվոտոն: Մակայն մենք առանձնացված և անտեսված ենք զգում մեզ: Մենք ցանկանում ենք համաշխարհային համրության մեջ հանդես գալ որպես պատասխանատու գործընկեր, սակայն ոչ միայնակ»:՝ Զանի որ ՆԱՏՕ-ն շարունակում է իր հետագա ընդլայնումը դիտարկել որպես ուղեկիչ, նա ստիպված է հաշվի նստել այս հայտարարության հետ:

16 «Ռուսական արձագանքը ՆԱՏՕ-ի ընդլայնմանը»: Արխիվը՝ www.nyu.edu/globalbeat/pubs/ib28.html

1994 թվականին ՆԱՏՕ-ն առաջին քայլերը ձեռնարկեց նախկին Խորհրդային Միության կողմից վերստնվող տարածքներում գործընկերներ ձևաբանելու ուղղությամբ: Գա «Գործընկերություն հանուն խաղաղության» (Գ-ՀԽ) ծրագրի նախաձեռնությունն էր:¹⁸ Այս համագործակցության նպատակն էր հնարավորություն բնօրինակ զարգացող ժողովրդավարություններին՝ բարելավելու իրենց ռազմական կարողությունները և արյունավետությունը՝ միաժամանակ միասին աշխատելով խուսափել հակամարտություններից: Թեև Գ-ՀԽ-ն գործընկերների չի առաջարկում լիիրավ անդամներին տրվող արտոնությունների անբողջական փաթեթը, այն, այնուամենայնիվ, գործում է այն ենթադրության հիման վրա, որ դաշնակիցների և մեկ ընդհանուր հավաքի առկայությունը (որտեղ կարելի է քարձրածայնել մտահոգությունները) բոլոր կտա կրճատել կամ անբողջովին խուսափել Գործընկերության մեջ մտնող երկրների միջև քաջ հակամարտություններից: Գործընկերություն հաստատելու համար երկրները պետք է քվադրարեն որոշակի պահանջների, որոնցից առաջնայինը զինված ուժերի արդիականացումն է և ՆԱՏՕ-ի կողմից ավյալ երկրի զինված ուժերին համագործակցության ներգրավելու տեսանկյունից պատրաստվածությունը տրվող զենադատական: Այդ պետություններին տրամադրվում է ֆինանսական օժանդակություն, օրինակ՝ հակահետևակային ակններքն ակամազներով նպատակով: Գ-ՀԽ-ին անդամակցող պետությունները կարող են համագործակցել Գ-ՀԽ-ի անդամների հետ խաղաղության առաքելությունների շրջանակներում, ինչպես նաև՝ այլ ծրագրերում, որտեղ զգացվում է նրանց կարիքը:¹⁹

Գ-ՀԽ-ի կազմավորումից երեք տարի անց ՆԱՏՕ-ում խնդիր դրվեց ամրապնդել հարաբերությունները գործընկերների հետ, հիմնադրվեց Եվրատլանտյան գործընկերության խորհուրդը (ԵԱԳԽ):²⁰ Խորհուրդը գործում է որպես դիվանագիտական մարմին և բոլոր ներկայացուցիչներն ունեն դիվանագիտական կարգավիճակ: Այն բոլոր պետությունները, որոնք առնչվում են ՆԱՏՕ-ի հետ՝ լինեն դրանք լիիրավ անդամներ թե գործընկերներ, ներկայացված են ԵԱԳԽ-ում: Այնուհետ, որտեղ Գ-ՀԽ-ն աշխատում է ռազմական ինտեգրման շուրջ, «ԵԱԳԽ-ն գլխավորում է քաղաքական քանակությունները և տրամադրում ֆորում» անդամների միջև դժգոհությունների բննաբանման, ինչպես նաև միասնական հայտարարությունների ընդունման համար, ինչպիսին էր, օրինակ, 2002 թվականին Պրահայի գագաթաժողովում ընդունված «Գործընկերության գործողությունների պլան ընդդեմ ահաբեկչության» փաստաթուղթը: ԵԱԳԽ-ն հանդիպում է ամբողջ մեկ

անգամ՝ քննարկելու բոլոր կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, ինչպիսիք են, օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանությունը, գնահատման ոչնչացման զենքերը և ճգնաժամների կառավարումը: Այսօրինակ հանդիպումներից բոլոր երկրներն սմանակությունը պարտադիր չէ: Երկրները կարող են մասնակցել այս հանդիպումներին, եթե քննարկվող թեման առնչվում է իրենց ազգային շահերին: Գործընկերության գործողությունների պլանների կանոնավոր ընդունումը խորհրդանշում է տարբեր պետությունների անասական շահագրգռվածությունը ստրբեր թեմաներով և միասնական ջանքերը՝ ուղղված առկա խնդիրների լուծմանը:²¹

Ուղղվածության փոփոխություն

Մտղ պատերազմի ավարտը բազմաթիվ փոփոխությունների տեղից տվեց թե ՆԱՏՕ-ն, թե դաշինքի երկրներում: Այն բոլոր պետությունները, որոնք մի ժամանակ Վարչակազմի համաձայնագրի մաս էին և դե յուրե՝ ղնամիներ ՆԱՏՕ-ի և անցած երկրների համար, այժմ հայտնվել են քարիկայի նույն կողմում՝ իրրե դաշնակիցներ: Պարզ էր, որ անհրաժեշտ էր կազմակերպության առաջնությունների վերագնահատում, որպեսզի կանխփ այն վտանգը, թե դաշինքը կարող է վերածվել ժամանակի պահանջներին չթավարարող մի կատարից և ի վերջո արժանանա Վարչակազմի համաձայնագրի ճակատագրից:

Ավելին, փոխվում է նաև հավաքական անվտանգության ավանդական ընկալումը, պետությունների խնդիր կողմից խաղաղության ռազմական պահպանումը (ռազմական բնույթի զայտրական ներուժի ասպակիներ միջուկով) և ազդեցիկ զինված դիմակայությունը ժամանակակից պայմաններում առնվազն ոչ անբողջական են թվում: Այսօր հավաքական անվտանգության գաղափարը և վերախնամակորման գործընթացի մեջ է գտնվում: Փոխվում է համատեղ անվտանգության էությունը, բազմաբնույթ են դառնում դրա դրսևորման ձևերը: Պատճառը ժամանակակից փոխկապակցված աշխարհում անվտանգության՝ որպես բազմաբնույթ և առավել ընդգրկուն դարձող երևույթի փոփոխություններն են: Գրան են դրոշմ այն նոր սպառնալիցներն ու մարտահրավերները, որոնք պետական սահմաններ չեն ճանաչում, այդպիսիք հանդիսանում են ահաբեկչությունը, կրոնական ծայրահեղականությունը, զենքի անօրինական շրջանառությունը, ինչպես նաև այնպիսի ոչ ավանդական սպառնալիցներ, ինչպիսիք այժմ

18 Անդամների անբողջական ցանկին ծանոթանալու համար՝ տես հավելված II:

19 Աղբյուրը՝ www.nato.int/issues/efp:

20 Անդամների անբողջական ցանկին ծանոթանալու համար՝ տես հավելված II:

21 Աղբյուրը՝ www.nato.int/issues/ieapc:

առկա են տնտեսական, էկոլոգիական, տեղեկատվական գործը համակարգերում, որոնց դիմակայությունը վեր է առանձին վերցրած մեկ պետության կամ դրանց ոչ արդյունավետ միավորման հնարավորություններից:

Հաշվի առնելով այս բոլոր փոփոխությունները՝ ՆԱՏՕ-ն ձեռնամուխ եղավ ներքին վերափոխումների: 1994 թվականին նախաձեռնվեց «Գործընկերության համուն խաղաղության» ծրագիրը: Գործընկերությանը կարող էր անդամացնել Եվրոպա աշխարհամասի և Հյուսիսատլանտյան տարածաշրջանի ցանկացած պետություն: Այսօր Եվրոպայում միայն մի քանի երկրներ կան, որ դեռևս չեն անդամացել այս կառույցին՝ Բուսնիա և Հերցեգովինան ու Սերբիան: Նախկին խորհրդային բոլոր հանրապետությունները, այդ թվում և Հայաստանը, այս գործընկերության անդամներ են:

Սակայն միայն համագործակցությունը քննալայնելը բավական չէ ՆԱՏՕ-ն 21-րդ դար առաջնորդելու համար: Իր գոյության առաջին քառասուն տարիների ընթացքում ՆԱՏՕ-ի նպատակն էր վարել լայնամասշտաբ պատերազմներ: Վախ կար, հատկապես 1960 և 1970-ականների ծանր ժամանակներում, որ միջուկային պատերազմը ՆԱՏՕ-ի և ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակիցների միջև անխուսափելի է: Մեկը մյուսի հրետից ուսումնասիրվում և քննարկվում էին քազմաթիվ սցենարներ այն հույսով, որ դրանցից գոնե մեկն ի վիճակի կլինի կասեցնել միջուկային ոչնչացման վտանգը: Երբ 1970-ականներին հարաբերությունները փոքր-ինչ բարելավվեցին, կազմակերպության ուղղվածությունը փոխվեց պատերազմները հաղթելուց դեպի խաղաղության պահպանում: 1980-ականների կեսերին Խորհրդային Միության նախագահ Միխայիլ Գորբաչովը բացառապես քննարկում էր ՆԱՏՕ-ի և Արևմտաօրի հետ հարաբերությունների բարելավման հարցը, իսկ տասնամյակի ավարտին ընկավ Քեռլիքի պատը, և Մեծ Բրիտանիայի վարչապետ Ռիչարդսը Չերչիլի կոչած «երկաթյա վարագույրը» սկսեց քայքայման: Երբ 1989 թվականին Լեհաստանն անկախություն հռչակեց, իսկ Գորբաչովը հրաժարվեց կիրառել այսպես կոչված բրեժնևյան դոկտրինը, արդեն պարզ էր, որ «սառը» պատերազմը մոտենում է իր ավարտին:

1990-ականներից ՆԱՏՕ-ն հայտնվեց նոր դերում, որին օժանդակում էր Միավորված ազգերի կազմակերպությունը: 1994 թվականին մտնելով Բուսնիա՝ ՆԱՏՕ-ն վերածվեց խաղաղապահ ուժի: Խորհրդային Միությունն արդեն գոյություն չուներ, ինչի մասին պաշտոնապես հայտարարվել էր 1991 թվականի դեկտեմբերին: ՆԱՏՕ-ի հաջորդ առաքելությունները Կոսովոյում և Նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիայում մեկ անգամ ևս հաստատեցին այս նոր ուղղվածությունը: ՆԱՏՕ-ն այսպեսուցից, որ կարող է խաղաղություն անրագրել այնտեղ, որտեղ ՄԱԿ-ի ուժերն անհաջողության էին մատնվել, քանի որ նա իրավասու էր հարձակողական

ուժ գործադրել այն դեպքում, երբ անիրավեչու է գտնել անհատների կամ խմբերի, որոնք խոչընդոտում են խաղաղության գործընթացին: Հենց այն ժամանակ, երբ թվում էր, թե դաշինքը հաստատվում է իր նոր դերում, որը միաված էր նոր հազարամյակին, որպես նոր սպառնալիք գլոխ բարձրացրեց ահաբեկչությունը:

2001 թվականի սեպտեմբերի 11-ին Ալ Կաիդայի ահաբեկիչները երկու մարդատար ինքնաթիռներ ուղղեցին դեպի Նյու Յորքում գտնվող Առևտրի համաշխարհային կենտրոն, երրորդը՝ դեպի Պենտագոն, իսկ դեպի Վաշինգտոնում գտնվող չրագահայտված չորրորդ թիլայն շարժվող չորսորդին ստիպել էին վարառային վայրէջք կատարել Փենսիլվանիայում: Հաջորդ ամիս Միացյալ Նահանգները ստան Աֆղանիստանը՝ հիմնավորելով թայլը նրանով, թե այնտեղ է տեղակայված Ալ Կաիդայի գլխավոր շտաբը, և որ մայրաքաղաք Քաբուլի թալիբան վարչակազմը խրախուսում և ֆինանսավորում է ահաբեկչական հարձակումները: Ըստ Հյուսիսատլանտյան համաձայնագրի 5-րդ հոդվածի, սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտը դիտարկվեց որպես հարձակում ՄԱՆ-ի վրա, և ՆԱՏՕ-ն Միացյալ Նահանգներին առաջարկեց իր աջակցությունը: Նախնական ռազմական գործողություններից հետո ՆԱՏՕ-ն Աֆղանստան ուղարկեց Միջազգային անվտանգության օժանդակության ուժերին (ISAF), որոնք նպատակ ունեն իրկելու կայունություն հաստատել, ինչպես նաև նպաստել ՄԱՆ-ի գործերը Իրաքի պատերազմի համար: Դաշինքը համաձայնվեց նաև օժանդակել լեհական զորքերին Իրաքի պատերազմում, որն ՄԱՆ-ի կողմից դիտարկվում էր որպես Աֆղանստանում սկսված ահաբեկչության դեմ պայքարի արտանվաճություն: Նույն տարում, քիչ ավելի ուշ, ՆԱՏՕ-ն առաջին անգամ օգտագործեց արագ-արձագանքման գործառնալիքում:

Այսպիսով, քառասուն տարվա զգոնությունից և քոնոություններից խուսափելուց հետո վերջին տասնամյակում ՆԱՏՕ-ն մեղքավեց չորս խոշոր խաղաղապահ առաքելություններում և իր գոյության ողջ ընթացքում առաջին անգամ կիրառեց 5-րդ հոդվածը: Բացի խաղաղապահ գործունեությունը, ՆԱՏՕ-ն իր գործունեության մեջ ստիպված է ավելացնել ևս մեկ հարրություն՝ հակաահաբեկչությունը: Սա պատճառներից մեկն էր, որոնք հիմք հանդիսացան 2003 թվականին ՆԱՏՕ-ի արագ արձագանքման ուժերի կազմավորման համար, որի նպատակն էր արագաշարժ և ժամանակակից գործառնալիքման ստեղծումը, որ կարողանար հարկ եղած դեպքում անմիջապես արձագանքել: Եվ այս ամենն իրագործվում է՝ հաշվի առնելով այն փաստը, որ ներկա հակամարտություններն առավել փորձամաշտաբ են, քան այն հավանական հակամարտությունները, որոնցից խուսափելու

նպատակով էլ տեղեփել է դաշինքը: Կոպիտ ուժն այնքան արդյունավետ չէ կիսրող լինել, որքան ճկուն է հեշտոթյամբ մանևրողը:²²

Ավելին, քան ռազմական դաշինք

ՆԱՏՕ-ի ոչ բոլոր առաքելություններն են ռազմական: Գ-Հ-ի և ԵԱԳՆ-ի միջոցով վերջին մի քանի տարիներին ՆԱՏՕ-ն ընդլայնում է իր դերը մի շարք նոր ասպարեզներում: Համագործակցելով ՄԱԿ-ի մի շարք կառույցների հետ՝ ՆԱՏՕ-ն և Գ-Հ-ն իրականացրեցին մի շարք վարժարաններ, որոնց նպատակն էր բարձրացնել անդամ երկրների պատրաստվածությունը՝ դիմակայելու երկրաշարժերին, հրդեհներին և այլ բնական աղետներին: 2001 թվականի սեպտեմբերի 11-ից հետո ՆԱՏՕ-ն շեշտում է նաև քաղաքացիական պարտաստվածությունը՝ պաշտպանվելու հնարավոր ահաբեկչական հարձակումներից՝ ներառյալ քիմիական, կենսաբանական և միջուկային հարձակումները:²³

Բացի բնական աղետներին դիմակայելու համար անհրաժեշտ պաշտպանվածության շեշտադրումից, ՆԱՏՕ-ն նախաձեռնել է նաև գիտական ծրագիր: Այն նախաձեռնվել է 1956 թվականին Կանադայի, Իտալիայի և Նորվեգիայի կողմից և վերսկսվել 1999 թվականին՝ ներառելով Գ-Հ-ի և Միջերկրածովյան երկվտարյան պետությունները: ՆԱՏՕ-ի Գիտական ծրագիրը ձևավորվել է ՆԱՏՕ-ի անդամների և Գ-Հ-ի պետությունների միջև մի շարք բնագավառներում, մասնավորապես ֆիզիկայի, ճարտարագիտության, բնագիտության, շրջակա միջավայրի պահպանության և անվտանգության հետ առնչվող գիտությունների (միջուկային, քիմիական և կենսաբանական) ասպարեզներում գիտական համագործակցությունը խթանելու նպատակով: Գիտական մետաքսն ճանապարհ» ծրագիրը, որի նպատակն էր կազմակերպել «Վիրտուալ մետաքսն ճանապարհ» ծրագիրը, որի նպատակն էր խնդրներն ու բարձր տեխնոլոգիաները ներծնծել Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում գտնվող մայրիկի Նորդրոպային Միություն այն երկրներ, որոնք մտնում են Գ-Հ-ի մեջ: Դրանց բվում է նաև Հայաստանը:²⁴

Ժամանակակից հասարակության մարտահրավերների հանձնաժողովը ՆԱՏՕ-ի մեկ այլ ոչ-ռազմական նախաձեռնություններից է: Հիմնվելով 1969 թվականին՝ այն նպատակ ունի բարելավել անդամ երկրների սոցիալական

և կրթության պայմանները: Կրկին հիմնվելով անդամ երկրների համագործակցության վրա՝ այս հանձնախումբն իրականացրել է մի շարք նախաձեռնություններ՝ սկսած հասարակական առողջապահությունից մինչև արտոտված շրջակա միջավայրի մաքրումն ու վերականգնումը: Ընդհանրապես Արդի հասարակության հանձնաժողովի գործունեության նպատակն է բարձրացնել անդամ և գործընկեր երկրների կենսամակարդակն ու խթանել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված փորձերը:²⁵

Հենց այս խմբերի միջոցով էլ ՆԱՏՕ-ն իրականացնում է իր ոչ-ռազմական գործունեությունը: Բացի ռազմական արդիականացումից, համագործակցելով անդամների և գործընկերների հետ նաև այլ ոլորտներում՝ դաշինքին հաջողվում է խաղաղ միջոցներով խթանել առաջընթացն ու հասարակական վերափոխումները: Այսպիսով, նույնիսկ երեկազմակերպության ռազմական գործունեությունն ինչ-որ պահի կամ ինչ-որ պատճառներով այլևս անհարկի համարվի, այն բավականաչափ պատճաններ ունի իր գոյությունն արդարացնելու և շարունակական լինելու համար:

Խաղաղաբար առաքելություն Բալկաններում

ՆԱՏՕ-ի ռազմական պարտավորությունների մեծ մասն այսօր վերաբերում է խաղաղապահությանը: Մինչ օրս այդորինակ գործողությունների մաս երեք-քստորդն իրականացվել է Բալկանյան տարածաշրջանում, մասնավորապես նախկին Հարավսլավիայի վիլոգամից հետո առաջացած նոր հանրապետություններում: 1994 թվականին Բոսնիայում իրականացված կայունացնելու համար ՄԱԿ-ը խնդրեց ՆԱՏՕ-ի աջակցությունը: 1999-ին ՆԱՏՕ-ի ուժերը մտան Կոսովո, որը Մերքիայի մի մասն էր, իսկ 2001-ին՝ Նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիա: 1949 թվականից ի վեր, երբ ձևավորվեց դաշինքը, Բոսնիայի և Կոսովոյի գործողություններն առաջին դեպքն էին, երբ ՆԱՏՕ-ի ուժերը ռազմական գործողություններ ծավալեցին պատերազմական տարածքում:

Բոսնիայի հակամարտության առաջին երեք տարիների ընթացքում (1992-1995) ՆԱՏՕ-ն ընդամենն աջակցում էր ՄԱԿ-ի ուժերին և խուսափում որևէ վճռորոշ դերակատարում ունենալուց՝ ստանձնելով միայն ուշ-րիշխային գոտիների պահպանման և պատժամիջոցների կիրառման վեպահստություններ իրականացնում: 1994 թվականին ՄԱԿ-ը ՆԱՏՕ-ին խնդրեց իր վրա վերցնել խաղաղապահ գործողությունների իրականացումը,

22 ՆԱՏՕ-ն «Պրատսլից հետո. նոր անդամներ, նոր հնարավորություններ, նոր հարաբերություններ», էջ 3-5:

23 ՆԱՏՕ-ն այսօր. անվտանգության և կայունության կառուցում բոլորի համար, էջ 32:

24 ՆԱՏՕ-ն այսօր, էջ 33-34:

25 ՆԱՏՕ-ն այսօր, էջ 35:

քանի որ ՄԱԿ-ի սեփական սահմանափակումները թույլ չէին տալիս նրա գործերին անել ավելին, քան ինքնապաշտպանվել: Եվ այսպես, 1995 թվականի օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ՆԱՏՕ-ն զանգվածային ռմբակոծություններ սկսեց, որպեսզի հակամարտող կողմերը նստեն բանակցության սեղանի շուրջ: 1995 թվականի դեկտեմբերին ստորագրվեց Դեյթոնի խաղաղության համաձայնագիրը, իսկ հաջորդ շաբաթ ՆԱՏՕ-ի իրականացման զինուժը IFOR-ը, մտավ Բոսնիա, որպեսզի վերահսկի այդ համաձայնության իրականացման գործընթացը: Կատերգավոր կողմերին բաժանելու ատաղաբարձը տևեց մեկ տարուց պակաս, և դեկտեմբերին IFOR-ին փոխարինեց Կայունացման զինուժը՝ SFOR-ը: SFOR-ը երկրում մնաց մինչև 2004 թվականի վերջը, երբ նրան փոխարինելու եկան Եվրամիության գործերը:²⁶

ՆԱՏՕ-ի խաղաղասպառ հնտությունները երկրորդ անգամ փորձարկվեցին 1999 թվականին Կոսովոյում: Կոսովոյի էթնիկ ալբանացի բնակչության և սերբական ուժերի միջև լարվածությունը բացահայտ բռնության վերածվեց 1998 թվականին: Ավելի քան 300 հազար մարդ ստիպված էր լքել տարածաշրջանը, իսկ շատերն էլ սպանվեցին սերբական զորքերի և ոչ-ռազմական միավորումների կողմից: Սկզբնական սպառնալիքը, թե հոկտեմբերին օդային հարձակումներ կլինեն, ստիպեց սերբ նախագահ Միլոշեվիչին հետ կանգնել սկսած գործունեությունից, սակայն 1999 թվականին կողմերը կրկին պատերազմում էին: Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) դիտորդները ստիպված էին դուրս գալ երկրից իրենց իսկ անվտանգության մկատարումներով, իսկ ՆԱՏՕ-ն երկուստեքն ամիս տևողությամբ ռմբակոծություններ սկսեց Հարավսլավիայի Համաբախտությունում (Մերքիայում), մինչև Միլոշեվիչը հանձնվեց: Հակամարտությունն ամփոփելով զինադադարով՝ ՆԱՏՕ-ն օգտագործեց Կոսովոյի համար նախատեսված իր ուժերը՝ KFOR-ը, տարածաշրջանում կայունություն ապահովելու և կառավարության գործերի դեմ կովոդ Կոսովոյի ազատության բանակը զինաթափելու նպատակով: KFOR-ի տեղակայումից հետո տարածաշրջանը հնարավորություն ստացավ վերափոխվելու, իսկ ՆԱՏՕ-ի կողմից խտսացված անվտանգության շնորհիվ Կոսովոյի սերբ բնակչության մի մասը վերադարձավ տուն: Դեռևս անհայտ է, թե գործերն ինչքան ժամանակ կհման Կոսովոյում (ներկայում տարբեր երկրներից հավաքագրված մոտավորապես 30 հազարանոց զինուժ կա այնտեղ), սակայն գործողությունը մինչ այժմ գնահատվում է որպես հաջողված:²⁷

26 ՆԱՏՕ-ն այսօր, էջ 28:
27 ՆԱՏՕ-ն այսօր, էջ 29-30:

Ընդառաջելով Մակեդոնիայի կառավարության պաշտոնական խնդրանքին՝ օժանդակել զինաթափելու ալբանական ապստամբ խմբավորումը, որը 2001 թվականին սպառնում էր ամբողջ երկրին, ՆԱՏՕ-ն համաձայնվեց միջամտել՝ կանխելու վերահաս պատերազմը՝ Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետությունում: Երբ կողմերի միջև զինադադար կնքվեց, և կառավարությունը համաձայնվեց սահմանադրական բարեփոխումների միջոցով ապահովել ալբանացի փորձաձևումային իրավունքները, ՆԱՏՕ-ն 3500-անոց զորամիավորում ուղարկեց՝ իրականացնելու այսպես կոչված «Մեծ քերթահավաք» գործողությունը և հաջողությամբ կարողացավ մեկ ամսում ապստամբներին հավաքել 4000 միավոր զինք: Ներկայումս իրավիճակ կայուն է, և միայն մի փոքր զորաբաժին է տեղակայված երկրում՝ Եվրամիության և ԵԱՀԿ-ի դիտորդներից աջակցելու նպատակով: Մակեդոնիան արդեն քննարկում է ՆԱՏՕ-ի անդամակցության գործընթաց մտնելու հարցը:²⁸

ՆԱՏՕ-ն և Հարավային Կովկասը

ՆԱՏՕ-ն այսօր միտում ունի ընդլայնվելու և հնարավորին շատ եվրոպական պետություններ իր մեջ ընդգրկելու: Մա ներառում է նաև Հարավային Կովկասը: Այս տարածաշրջանը միշտ կարևորվել է միջազգային քաղաքականության մեջ: Լինելով Ռուսաստանի և Միջին Արևելքի, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի խաչմերուկներում՝ տարածաշրջանը շարունակում է կարևորվել համաշխարհային առևտրի տեսանկյունից, և պետ է նշել, որ սա չի վերաբերում միայն նավթին: Դժբախտաբար, տարածաշրջանը նաև մի շարք լուրջ հակամարտությունների օջախ է, որը խանգարում է վերոնշյալ ներուժը լիովին օգտագործել: ՆԱՏՕ-ն հույս ունի, որ զարգացնելով հարաբերությունները տարածաշրջանում և ապացուցելով, որ ի վիճակի է լուծել հակամարտությունները, կկարողանա ավելի մեծ անվտանգություն ապահովել ոչ միայն Կովկասում, այլև Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում:

Ժամանակի ընթացքում Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, հավանաբար, հրավեր կստանան անդամակցելու ՆԱՏՕ-ին: Սակայն անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը լուծի իր տարածայնությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ: 1952 թվականին Հունաստանը և Թուրքիան, որոնք դարձան ընդամենը ինչ, միացան ՆԱՏՕ-ին, երբ կարգավորեցին իրենց միջև առկա տարածայնությունները: Անհավանական է թվում, որ

28 ՆԱՏՕ-ն այսօր, էջ 30-31:

Հայաստանն ու Ադրբեջանը հնարավորություն ստանան առանձին անդամակցելու մի կազմակերպության, որն առավել կարեւորում է համագործակցության անհրաժեշտությունը: Վրաստանը և, բնւ սուր հակամարտություններ չունի ոչ Ադրբեջանի, և ոչ էլ Հայաստանի հետ, իր սեփական էիմնախնդիրներն ունի, որոնք ստիպված է լինելու լուծել մինչ անդամակցությունը դառնա իրական հնարավորություն: Բացի այդ, Հայաստանը և Թուրքիան պետք է կարողանան միասին աշխատել: ՆԱՏՕ-ն միայն Թուրքիա չէ, և Հայաստանը դաշնակիցներ ունի կազմակերպության մյուս անդամների շարքում, սակայն Թուրքիան մտնում է ՆԱՏՕ-ի մեջ, իսկ դաշինքը չի կարող հանդուրժել, որպեսզի իր երկու անդամների միջև բջնամական հարաբերություններ լինեն: Միևնույն ժամանակ, հարկավոր է հավասարակշռել հարաբերությունները ՆԱՏՕ-ի, Ռուսաստանի և Հարավային Կովկասի միջև: Թեև առաջխաղացում է գրանցված այս գործընթացում, այնուամենայնիվ, ՆԱՏՕ-ին ինտեգրվելու վերջնական որոշման իրավասությունը պատկանում է համապատասխան երկրների ժողովուրդներին:

Մենք ակնառես ենք, որ հարավկովկասյան պետություններն այսօր հավասարապես համագործակցում են ՆԱՏՕ-ի հետ գլխավորապես Գ-Հ-ի ծրագրի շրջանակներում: Այդ պարագան կարող է տարածաշրջանային միասնական շահի ձեւափորման սաղմերից մեկը հանդիսանալ, ինչը բավականին դժվար է պատկերացնել անվտանգության ապահովման այլ կազմակերպության շրջանակներում, քանի որ չկա անվտանգության ապահովման միջազգային այլ կառույց, որի շրջանակներում առկա են միասնական արժեքային համակարգ, անվտանգության ընկալումների նույնություն և աշխարհագրական համախմբվածություն:

Տարածաշրջանի անվտանգության ապահովման երկարամյակետ հետազոտում է միջազգային իրադրության փոփոխությունների պարագայում չպետք է բացառել անդրկովկասյան երեք համարապետությունների ավելի սերտ համագործակցություն, այդ բոլում և անդամակցությունը ՆԱՏՕ-ի հետ:

ԳԼՈՒԽ IV. ՆԱՏՕ-Ն ԵՎ ՖՅՍՍՍՆԸ

ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների ներկան և հեռանկարները

ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների լիարժեք մեկնարկը 1994 թվականին էր, երբ Հայաստանը միացավ Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին: Դաշինքի հետ ակտիվ գործակցության ծափալուծը Հայաստանը դիտում է որպես իր անվտանգության ապահովման ընդհանուր համակարգի կարևոր բաղկացուցիչ: ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններն, ըստ էության, իրենց կարևորությամբ լրացնում են հայ-ուսական երկկողմ ռազմաքաղաքական համագործակցության և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում անդամակցության շարքը:

ՆԱՏՕ-Հայաստան հարաբերություններն արդեն իսկ զարգացման երկար ուղի են անցել: Թեև Հայաստանն այսօր չունի ՆԱՏՕ-ին անդամակցելու հստակ արտահայտված նպատակ, այնուամենայնիվ, դաշինքի հետ մեր երկրի հարաբերությունների մակարդակն ու ծավալը պատկառելի է և չի կորցնում այն երկրներին, որոնք ՆԱՏՕ-ին անդամակցելու նպատակ են հետապնդում և պաշտոնական հայտարարություններ են արժում: Այսօր չկա գործընկերների համար քաց որևէ ծրագիր կամ նախաձեռնություն, որին Հայաստանը չի մասնակցում: Ավելին, ՆԱՏՕ-ի հանդեպ Հայաստանի կողմից վարվող իրատեսական ու հավասարակշռված քաղաքականությունը բարձր է գնահատվում Բրյուսելի կողմից, որտեղ լավ գիտեն, որ Հայաստանն իր վրա է վերցնում ճշիտ այնքան պարտավորություններ, որքան կարող է իրականացնել և չի ընկնում անտեղի հետտորության գիրկը:

ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ավելի քան տասնամյա վերընթաց զարգացումը 2005 թվականին իր տրամաբանական շարունակությունը գտավ Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) մշակման գործընթացի սկսումով: Այդ ծրագրի «Ներկայացման փաստաթուղթը» մշակելու համար ՀՀ վարչապետի կողմից

ստեղծվել էր միջգերատեսչական հանձնաժողով՝ արտաքին գործերի և պաշտպանության նախարարների համանախագահությամբ: 2005 թվականի հունիսին ՀՀ արագործնախարար Վարդան Օսկանյանը Հյուսիսատլանտյան խորհրդին ներկայացրեց վերջնամակալած «Ներկայացման փաստաթուղթը»: Փաստաթուղթը թվարկում է այն ոլորտները, որոնցում Հայաստանը մտադիր է սերտորեն համագործակցել դաշինքի հետ և ակնկալում է վերջինիս աջակցությունը: Փաստաթրթի հիման վրա պետք է մշակվի «Գործողությունների ծրագիր», որը կամրագրի ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունների որակն ու քանակը մտակա տարիների համար: ՆԱՏՕ-ի միջազգային քարտուրարության գեներալականով, Հայաստանի կողմից ներկայացված «Ներկայացման փաստաթուղթն» առավել հայտնվածն է այն երկրների շարքում, որոնք ներկայացրել են այդօրինակ փաստաթուղթ:²⁹

Մինչ ԱԳԳԾ-ի և դրա հնարավոր հետևանքների ավելի մանրամասն քննարկումը, անհրաժեշտ է քննարկել ՆԱՏՕ-ի հետ սերտ հարաբերություններ հաստատելու պատճառները: ՆԱՏՕ-ն հիմնական շեշտը դնում է իր անդամների անվտանգության ապահովման խնդրի վրա: Իր կառուցվածքի շնորհիվ այն ավելի արդյունավետ է, քան մի շարք այլ մեծատիպ կազմակերպություններ (օրինակ՝ ԵԱՀԿ, ԵՄ և այլն): Մակայն անվտանգության բավական քարո իրավիճակ ունեցող Հայաստանի համար առավել կարևորվում են անվտանգության այնպիսի հասնակարգերն ու գործընկերության ձևաչափերը, որոնց նա կարող է անդամակցել արդեն այսօր և որոնցից նա անհրաժեշտության դեպքում կարող է անհապաղ աջակցություն ակնկալել:

Հայաստանն արդեն իսկ երկկողմանի դրական հարաբերություններ է հաստատել ՆԱՏՕ-ի մի շարք անդամների հետ, առաջինի հերթին՝ ԱՄՆ-ի և Հունաստանի: Բայց այդ, ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները ևս կարելի է ընդհանուր առմամբ դրական գնահատել՝ չնայած Թուրքիայի հետ հարաբերություններում առկա քարոշություններին: Թուրքիան որոշակի գործում է հանդիսանում ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերություններում, այն առումով, որ Թուրքիայի հետ Հայաստանի սահմանը նաև ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի սահմանն է, և այն հանգամանքը, որ այդ սահմանը փակ է, զրկում է Հայաստանին ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններն ավելի արդյունավետ զարգացնելու հնարավորություններից: Հայաստանը բազմիցս նշել է, որ հայ-թուրքական սահմանը հանդիսանում է, փաստորեն, սառը

պատերազմի «երկաթե վարագույրի» վերջին վերապրուկը, որի գոյությունը ներկա միջազգային պայմաններում որևէ կերպ արդարացված չէ:

Հարկ է նկատել նաև, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները շարունակում են էական դեր ունենալ Հայաստանի անվտանգության ապահովման խնդիրներում: Երկու երկրների միջև ձևավորվել են անվտանգության ոլորտին վերաբերող սերտ կապեր, որոնք իրենց ազդեցությունն ունեն անվտանգության միջազգային կառույցների հետ Հայաստանի փոխհարաբերությունների վրա: Այդուհանդերձ, հայ-ռուսական անվտանգության ոլորտում համագործակցությունը մինչև այսօր խոչընդոտ չի հանդիսացել ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի կապերի սերտացմանը կամ հակասահմանակալ կապերի շրջանակներում Կոստոն և Իրաք խաղաղապահներ ուղարկելու համար: Ռուսաստանի կողմից հազիվ թե կարելի է ակնկալել թիչ թե շատ լուրջ մտահոգություն Երևան-Բյուրսել կապերի զարգացման վերաբերյալ, քանի որ Հայաստանն առայժմ չի դնում դաշինքին անդամակցելու հարց: Հատկապես այն դեպքում, երբ Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերություններն իրենց մակարդակով այսօր զգալիորեն գերազանցում են Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները:

Այսպիսով, առկա են երեք խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել, որպեսզի Հայաստանը կարողանա ապագայում մուտք գործել ՆԱՏՕ: Առաջինը պաշտպանության և անվտանգության խնդիրներն են: Մյուս մեջ մտնում է Հայաստանի զինված ուժերի վերապատրաստումը և վերազինումն ըստ ՆԱՏՕ-ի չափանիշների: Որպես ԱԳԳԾ-ի պահանջ, Հայաստանը պետք է ամբողջությամբ տեխնիկական հագեցվածությամբ վերազինված հետևազորային միավոր ունենա, որը կարող է 2010-ից մինչև 2012 թվականները լիովին մերթսույցված դիվիզիա տրամադրել: Երկրորդը հարևան երկրների հետ քաղաքական հարաբերությունները, մասնավորապես Դաքարադի հիմնախնդիրն է, և, երրորդը, Թուրքիայի հետ սահմանների բացման խնդիրն է. խնդիրներ, որոնք պետք է քաղաքա լուծում ստանան, մինչև ՆԱՏՕ-ն թույլատրի անդամակցության գործընթացն սկսել:

Հարաբերությունների զարգացման ժամանակագրությունը

Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններին սկիզբ դրվեց 1992 թվականի մարտի 10-ին, երբ Հայաստանը միացավ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին: Մինչև 1994 թվականը ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունները գրեթե գրոյական մակարդակի վրա են գտնվել՝ կառուցվածքային

²⁹ Տե՛ս «Միջգերատեսչական հանձնաժողովը քննարկում է ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի մշակման գործընթացը», «Անդամաձայն» գործակալություն, 3-9 հոկտեմբերի, 2005թ.:

կամ միջնորդ որևէ օդակի բացալարայթյան և լուրջ համագործակցության իրական անհրաժեշտության պակասի պատճառով:

1994 թվականի հունվարին ՆԱՏՕ-ի վեհաժողովը գործընկեր պետություններին հրավիրեց մասնակցելու «Գործընկերություն հանում խաղաղության» (ԳՀԽ) ծրագրին: Ծրագիրն ուղղված էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև նորանկախ պետությունների հետ համագործակցության խորացմանը՝ ռազմական, քաղաքական, գիտական և այլ ոլորտներում: 1997 թվականին ԳՀԽ-ն փոխարինվեց Եվրատլանտյան գործընկերության խորհրդով (ԵԱԳԽ), որը կոչված է ապահովել անդամ և գործընկեր երկրների մշտական շփումները՝ քաղաքականության, անվտանգության, ճգնաժամերի կարգավորման, խաղաղապահ գործունեության և բազմաթիվ այլ հարցերի շուրջ բազմակողմ խորհրդատվությունների իրականացման և համագործակցության նպատակով: Հայաստանը 1994թ. հոկտեմբերի 5-ին, ստորագրելով ԳՀԽ հիմնական փաստաթուղթը և 1997-ին մյուս 28 գործընկեր պետություններին հետ միասին մասնակցելով ՀՀԽ և ԵԱԳԽ նախարարների Սիմոնոպոլի հանդիպմանը՝ ստորագրեց ԵԱԳԽ հիմնարար փաստաթուղթը՝ այդպիսով դառնալով ԳՀԽ, ծրագրի մասնակցներից և ԵԱԳԽ հիմնադիր պետություններից մեկը:

ԳՀԽ շրջանակներում ՆԱՏՕ-ն հանձնատարյուն է ստանձնել ակտիվ խորհրդակցություններ անցկացնել ցանկացած գործընկեր պետության հետ, կերպիցին ուղղակի վտանգ զգա իր տարածքային անբողջակամության, անկախության, ինքնիշխանության կամ ազգային անվտանգության համընդ: ՆԱՏՕ-ն նաև հանձնատարյուն ունի աշխատանքներ տանել գործընկեր պետությունների հետ՝ ռազմական կառույցների հասարակական վերահսկողության և համատեղ գործադրությունների անցկացման ուղղությամբ: ԳՀԽ ծրագրի առանձնահատկություններից մեկն այն է, որ բացառապես սեփական կարողություններից և շահերից ելնելով է ԳՀԽ ծրագրի մասնակից պետությունը հայտնում ՆԱՏՕ-ի հետ համագործակցության իր համար նախընտրելի ոլորտները:

1996 թվական ապրիլի 9-ին Հայաստանը ՆԱՏՕ-ի ղեկավարությանը տրամադրեց իր «Ներկայացման փաստաթուղթը», որը սահմանեց կողմերի միջև համագործակցության ոլորտները, ուղղություններն ու ծավալները: ՀՀ «Ներկայացման փաստաթուղթում» որպես ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հիմնական ուղղություններ նշված են. քաղաքական խորհրդատվությունները, ռազմական ծրագրերի համատեղ մշակումը, տնտեսական և գիտական ծրագրերի համատեղ մշակումը, ճգնաժամերի կառավարումը և հաղթահարումը, ռազմական ենթակառուցվածքների զարգացումը, համապատասխան զենքերի արտադրությունը, աշակերտությունը իրկուսերին, ստանդարտացումը, կապի և տեղեկատվության փոխանակման բազայի ստեղծումը,

ծումը, հատուկ իրավիճակների բնագավառի ծրագրերի համատեղ մշակումը, գործընկերության տարբեր ոլորտներում կադրերի վերապատրաստումը, մասնավորապես ռազմական բնագավառում օտար լեզուների ուսուցումը:³⁰

ՆԱՏՕ-ի հետ ՀՀ հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացը կարելի է բաժանել երեք փուլի:³¹

Առաջին փուլ, անկախացումից մինչև 1997 թվականը: Այս շրջանում այդ հարաբերություններն իրենց կայացման նախնական փուլում էին և սահմանափակված էին բացառապես ԳՀԽ ծրագրի շրջանակներում ոչ լայն փոխգործակցությամբ և սակավաթիվ լայն ժխտայնություններով: 90-ականների սկզբին համագործակցությունը լայն ծավալ ուներ որոշ կոնկրետ ոլորտներում, օրինակ՝ ակամազերծման բնագավառում: 1993 թվականից ի վեր ԱՄՆ-ի կողմից ՆԱՏՕ-ի շրջանակներում ավելի քան 16 մլն. դոլար է հատկացվել կովկասյան հանրապետություններին ակամազերծման գործընթացները կազմակերպելու համար, որից 7 մլն. 395 հազարը հատկացվել է Հայաստանին:³²

1995 թվականի հունվարին Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև ստորագրվեց «Անվտանգության համաձայնագիր», որով սահմանվում է երկու կողմերի միջև զաղտնի փաստաթղթերի փոխանակման կարգն ու պարտավորությունները: ՀՀ-ի և ՆԱՏՕ-ի միջև ԳՀԽ ծրագրի շրջանակներում համագործակցության խնդիրների լուծման և կազմակերպման նպատակով 1995 թվականի փետրվարին ՀՀ կառավարության թիվ 55 որոշմամբ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով:

Երբ 1994 թվականին ՆԱՏՕ-ի կենտրոնակայանից տեղի էր ունեցել ընդամենը մեկ նշանակալից այցելություն Երևան (1994 թվականի մարտին Հայաստան այցելեց ՆԱՏՕ-ի խոսնակների խումբը՝ ՆԱՏՕ-ում բուրբական պատվիրակության ղեկավար, դեսպան Թ. Օպշերին գլխավորությամբ: Այլի նպատակն էր քաղաքական խորհրդակցություններ անցկացնել Հայաստանի տարբեր գերատեսչությունների հետ՝ ԳՀԽ ծրագրում մասնակցության վերաբերյալ), ապա քաղաքական շփումները սկսեցին ակտիվանալ սորեն 1995 թվականից: 1995 թվականի հուլիսին Հայաստան ժամանեց ՆԱՏՕ-ի պատվիրակությունը՝ Եվրոպայում դաշնակի ուժերի գերազայն հրամանատարի տեղակալ, գեներալ Ջ. Մաքքինզիի գլխավորությամբ: ԳՀԽ ղեկը ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների զարգացման գործում, ազգային զինված ուժերի ստեղծման բնագավառում Հա-

30. ԳԳ ԱԳՆ պատմությունագիտական արխիվ, ցուցակ V, գրք 179, էջ 226:

31. Յեւ Ն. Զամբարյան «Շեսադասարկածյան զարգացումները Եվրատլանտյան համագործակցության շրջանակներում և Հայաստան-ՆԱՏՕ փոխադրությունները», Երևան, 2005թ.:

32. U. S. Humanitarian Demining Programs in the Caucasus: Fact sheet. Washington, 13.02.2003. ³ԱՍ ընթացիկ արխիվ:

յատասնի կարիքները, ՀՀ կողմից «Ներկայացման փաստաթղթի»³³ ուղղությամբ տարվող աշխատանքները:³⁵

Առաջին անգամ 1996 թվականին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի այցելեց ՆԱՏՕ-ի կենտրոնակայան: Պատասխան այցով 1997 թվականի փետրվարին Հայաստան ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խ. Սոլանան:³⁴ Երևանյան առաջին քննարկումների հիմնական խնդիրը հանգուցում էր ռազմաքաղաքական նոր պայմաններում երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարներին և տարածաշրջանային անվտանգությանը: ՆԱՏՕ-ի ընդգնանման նկատմամբ հայկական կողմը որդեգրեց դիրքորոշում՝ պայմանավորված երկու առաջնորդող սկզբունքներով, նախ, յուրաքանչյուր պետություն ազատ է իր անվտանգության ապահովման հղանակների ընտրության հարցում, և երկրորդ՝ որևէ պետություն չպետք է իր անվտանգությունը ապահովի այլ պետության հաշվին: Փոխադարձաբար կարևորվեցին համեմատական այլ կառույցների (ԵՄ, ԵԱՀԿ, ԵԽ) հետ հարաբերությունների կամառքատումը ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների ընդլայնումը: Այս փուլի ավարտը նշանակողից 1997 թվականին ՆԱՏՕ-ի գորավարտություններին ՀՀ առաջին մասնակցությամբ: Հունաստանի Պոլիկատարո քաղաքում Գ-ՀՆ շրջանակներում կայացավ «Պրոտոնոս 97» միջազգային զինավարժությունը, որին մասնակցեց նաև ՀՀ զինված ուժերի 27 հոգանոց տորաքաժամուրը: ՀՀ մասնակցությամբ նույնանման գորավարժություն անցկացվեց նաև 1998 թվականին:

Երկրորդ փուլ. 1998-ից 2002 թվական: Այս շրջանում նկատելի էր, առաջին հերթին, ամենատարբեր մակարդակի փոխայցելությունների թվաքանակի աճ և համագործակցության ընդլայնման ու համակարգման համար որդշակի քայլերի իրականացում: Մինչև 2000 թվականը Հայաստանի մասնակցությամբ Գ-ՀՆ ծրագրին, հիմնականում ֆինանսական պատասխանելով, կրում էր պասիվ բնույթ: 2000 թվականի վերջին Գ-ՀՆ ծրագրում Հայաստանի մասնակցության դրական միտումներն արդեն նկատելի դարձան:

33 ԳՆ ԱԿ, պատմավիճակագրական արխիվ, ցուցակ III, գործ 250Ա, էջ 26:

34 Տեղիչ է Ռիչարդսոն ԼԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար Խ. Սոլանայի խոսքը՝ Հայաստան լայնատես ասլեիության ժամանակ, «Հայաստանն աշխարհագրորեն գուցե հեռու է Եվրոպայից, բայց նրա մտահոգություններն ու շահերն այնքան էլ հեռու չեն: Կովկասյան տարածաշրջանը կարևոր շրջան է Եվրոպայի համար: Եվրոպան չի կարող իրեն անընդունել անվտանգ գոտու կամ վտանգանքից իր ողջ Եվրոպե, քանի որ կովկասյան երկրները դուրս են մնում Եվրոպական անվտանգության բանաձևի սահմաններից: Իհարև, դաշինքի անդամների անվտանգությունը մնում է մեր գլխավոր խնդիրը: Սակայն մենք հիտակցում ենք, որ մեր անվտանգությունը անվազելիորեն շարունակվում է այն երկրների անվտանգությանը, ինչպիսիք են իսրայելական և հաստատությունների են մեր տարածաշրջանում և մեր արևելքի միտում: Այլ երկրների և հաստատությունների բաղադրանքային առանցքային խնդիրը: ԼԱՏՕ-ը գործունեության արդյունքները, որոնք ստեղծվում են Եվրոպական տարածաշրջանում, տարածվում են նաև Կովկասում»:

1998 թվականին լուծվեց Գործընկերության համադրման օգակում (Գ-ՀՈ) Հայաստանի կապի սպայի նշանակման հարցը: Կապի սպան նշանակվեց 1998 թվականի սեպտեմբերին: Մշտական կապի ապահովումն ամրապնդվեց նաև քաղաքական առումով նույն թվականին ՆԱՏՕ-ում ՀՀ դեսպանի նշանակմամբ: 1998 թվականի հոկտեմբերին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանայի այցը տարածաշրջան նախաձեռնեց նոր որակի հարաբերությունների սկզբնավորման փուլը:

1997-2002 թվականները դարձան ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի ակտիվ շփումների, փոխադարձ այցելություններով հազցեցնած ժամանակաշրջան, ինչը կարելի է բացատրել և Գ-ՀՆ ու ԵԱՀԿ շրջանակներում համագործակցության ասպարեզների ընդլայնման վերաբերյալ Հայաստանի ցուցաբերած հանճնառությամբ և ՆԱՏՕ-ի կողմից այդ քայլերին պատշաճ արձագանքելու պատրաստակամությամբ: 2001 թվականի հունվարին և 2003 թվականի մայիսին տեղի ունեցան ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում Խ. Սոլանային փոխարինած Ջ. Ռոբերթսոնի երկու այցերը տարածաշրջան, մասնավորապես Հայաստան: Մինևույն ընթացքում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը երկու անգամ այցելեց Բյուրան: ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների մերձեցումը լորդ Ռոբերթսոնի կողմից ամփոփ կերպով ներկայացվեց 2002թ. դեկտեմբերին, «Հայաստանն ակտիվ մասնակցում է ԵԱՀԿ/Գ-ՀՆ շրջանակներում խորհրդատվություններին և համագործակցությանը և երկիր է, որի ձեռքում է գտնվում Եվրոպան ու Ասիան կապող կարևոր տարածաշրջանում երկարատև խաղաղության ու կայունության բանալին: Գ-ա ավելի քան քաղական է, որպեսզի Հայաստանը համարենք կարևոր և արժեքավոր գործընկեր ամրոջական և ազատ Եվրոպայի մեր որոնումներում»:³⁵

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1999 թվականի ապրիլին մասնակցեց Վաշինգտոնում կայացած ՆԱՏՕ-ի հորինյալական գագաթնաժողովին և 2002 թվականի նոյեմբերի Պրահայի գագաթնաժողովին: Իր կույրում ՀՀ նախագահը շեշտեց, «Համագործակցությունն ու գործընկերությունն արդեն իսկ զգալի արդյունքներ են տալիս՝ ուղղակի օգուտ ընդլուծվ ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր պետությունների քաղաքացիներին: ՆԱՏՕ-ն, ըստ էության, դաշնակից անդամների անվտանգության համակարգի վերածվում է ընդհանուր արժեքների գոտու պաշտպանության համակարգի: Այս նվաճումների հետագա ամրապնդումը և ապագա մարտաիրավիքների դիմակայելը կլինեն գործընկերության հետագա հաջողության բանալին»:³⁶

35 «Մեխանիզմ» լրատվական գործակալություն, 16 դեկտեմբերի, 2002թ.:

36 Ելույթն ամրոջությանը տես Հայաստանի Հանրապետություն օրաթեր, 22 նոյեմբերի, 2002թ.:

ՀՀ արտաքին գործերի և պաշտպանության նախարարները, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետը տարին երկու անգամ մասնակցում են ԵԱԳ-ի շրջանակներում կայացող արտաքին գործերի, պաշտպանության նախարարների և ռազմական հանձնաժողովի կանոնավոր նիստերին: ՀՀ պատվիրակությունն ակտիվորեն մասնակցում է ԵԱԳ-ի դեսպանների ու քաղաքական հանձնաժողովների նիստերին և 1999 թվականին ստեղծված Կովկասի հարցերով հատուկ խմբի աշխատանքներին:

2002 թվականին Հայաստանին շնորհվեց ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի ասոցիացված անդամի կարգավիճակ՝ Հայաստանի խորհրդարանի կողմից ներկայացված համապատասխան դիմումի համաձայն: Հայ խորհրդարանականները հնարավորություն ստացան եվրոպական անվտանգության վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտել այս կարևոր առաջանում:³⁷

2000-2003 թվականներին Հայաստանում կազմակերպվեցին ՆԱՏՕ-ի երեք միջազգային սեմինարներ, որոնց մասնակցեցին 25 դաշնակից և գործընկեր երկրներ:³⁸ 2001 թվականին հիմնադրվեց Հայկական առաջնության ասոցիացիան (ՀԱԱ), որն Առաջնության պայմանագրի ասոցիացիայի ճյուղն է Հայաստանում: Վերջինս միավորում է անդամ և գործընկեր պետությունների կամավոր հիմունքներով ստեղծված ազգային ոչ կառավարական կազմակերպությունները:³⁹ Այսպիսով, 1998-2002 թվականներին հասակեցվեցին բոլոր այն անձինք, կառույցներ ու մեխանիզմներ, որոնք պետք է լիարժեքորեն ապահովեն ՆԱՏՕ-Հայաստան փոխադարձությունները, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար, քարտուղարություն, Հարային դիվանագիտության բաժին, մասնական և քաղաքական կոմիտեներ, գազաբնաժողովներ, ԵԱԳ-ի, քաղաքական խորհրդատվություններ, խորհրդարանական վեհաժողով, ՀՀ նախագահ, ՀՀ Աժ: ՀՀ կառավարություն (ԱԳ, ՊՆ և այլն), այլ պետական ինստիտուտներ, ոչ պետական մակարդակով մաս Հայկական առևանդության ասոցիացիան:

Վերը նշված փուլերում Հայաստանի համագործակցության մակարդակը երկարամտյան շրջանակներում կարելի է բավարար համարել, որը կայուն զարգացման էիմը ստեղծեց ապագայի համար:

Հարաբերությունների զարգացման գործընթացի երրորդ փուլի սկիզբ կարելի է համարել 2002 թվականը: Եթե նախորդ երկու փուլերի ընթացքում ՀՀ-ի հարաբերություններն իրենց մակարդակով զիջում էին ՆԱՏՕ-ի հետ Արևատանի և Ադրբեյջանի հարաբերություններին, ապա այս փուլում այդ մակարդակն ավելի ու ավելի է հավասարվում վերջիններին: Ընդհանրապես, 2002 թվականից հետո ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունները վերելք են ապրում և վերջին երկու տարիների ընթացքում գալիս է ՆԱՏՕ-ի հետ ազգայական և քաղաքական համագործակցության առաջընթացը: Այսօր Հայաստանը ներգրավված է համագործակցության բոլոր այն ոլորտներում, որոնք դաշինքի կողմից որակվել են որպես գործընկեր պետությունների հետ հարաբերությունների զարգացման առաջնություններ: Այն է՝ քաղաքական երկխոսություն, փոխադրակցություն հաստատում ու պաշտպանական քայքայություններ, ինչպես նաև մասնակցություն ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող գործողություններին:

Համատեղվիության հաստատման առումով արդեն 2002 թվականից Հայաստանն ակտիվորեն մասնակցում է Պլանավորման և վերանայման գործընթացին (ՊՎԳ):⁴⁰ ՊՎԳ-ի գործադրումը սկսվեց 1994 թվականին, որի նպատակն էր ինտեգրացման, փոխգործակցության զարգացման և ստանդարտների մերձեցման մի յուրօրինակ ձևաչափ ապահովել անդամության ձգտող երկրների հետ:

ՊՎԳ-ին մասնակցելու շրջանակներում տրամադրվել են մեկուսյալ խաղաղապահ գումարտակ, ռազմաինժեներական, հակատանկային, ակա-նանետային, հետախուզական, բժշկական դասակներ և մատակարարման ակտ (ենթադրվում է, որ այս ուժերը, դաշնակիցների հետ համատեղելի դառնալուց հետո, անհրաժեշտության դեպքում տրամադրվելու են ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող գործողություններին մասնակցելու համար):

Համատանը 2004 թվականի փետրվարից իր 34-հոգանոց զորամի-կությունը մասնակցում է «KFOR» գործողությանը⁴¹ սեփական գերադրում ունենալով դաշնակիցների կողմից իրականացվող խաղաղապահ գործողություններին և որպես հետևանք՝ եվրատլանտյան տարածաշրջանի անվտանգության ապահովմանը՝ ՆԱՏՕ-ի գործողություններին մասնակցելու ունակությունները բարձրացնելու նպատակով Հայաստանը հյուրընկալեց «Համատեղ լավագույն ջանք 2003» ՆԱՏՕ/Գ-Հե դաշտային գորավար-

37 Վեհաժողովն ամբողջությամբ անկայ է ՆԱՏՕ-ից և հանդես է գալիս որպես կայացող ռազմախորհրդարանների և Գլխավոր ասոցիացիայի խորհրդի միջև: Դա հնարավորություն է տալիս հաշիվ անելու ՆԱՏՕ-ի շահերը ազգային օրենսդրության մշակման գործընթացում, և, մյուս կողմից, կա նախաձեռն (1999 թվականին դաշինքի նոր անդամակցության որոշումների վավերացում), որ այն կարող է վավերացնել դաշինքի կարևորագույն որոշումները: See NATO Handbook, 2001, էջ 463-466:

38 Նշանակալից էր 2002 թվականի հոկտեմբերին կազմակերպված սեմինարը, որը կրում էր «Կայացող միջազգային արտերկրյան դեմ. տարածաշրջանային համագործակցության հեռանկարներ» վերնագիրը, որը ՆԱՏՕ-ի անվանակոչող սեմինարն էր Ֆարալային Կովկասում: Armenia and NATO. AA Assembly. Fact Sheet, 2004:

39 ՅՈւՆ մասին տես www.euro-atlantic.am ինտերնետային կայքում և N. Hovhannisyants, The NATO-Armenian Relations in the Context of the NATO Enlargement, Turkish and Ottoman Studies, Yerevan, 2005, p. 73-79:

40 Planning and Review Process (PARP) - Պլանավորման և վերանայման գործընթացը ԳՆԵ ծրագրի խորհրդային, ներդրումական մեխանիզմներից է և ծառայում է համատեղվիության և ուժերի պահպանման ինդիկատոր շուրջ համագործակցությանը:

41 «KFOR»-ը Կոսովոյում ՆԱՏՕ-ի զինուժն է:

ծախյունը, որը երկրորդ փուլային արժեքահավետ հարաբերությունների ակնհայտ դրսևորում էր:⁴² Ընդհանուր առմամբ, 2003 թվականին ԳՀԼն ծրագրի շրջանակներում Հայաստանը մասնակցեց 50 միջոցառումների:⁴³

2004 թվականին ՀՀ Ազգային Ժողովը վավերացրեց ՆԱՏՕ-ին՝ «Ձինված ուժերի կարգավիճակի մասին» համաձայնագիրը (ՁՈՒԿՀ):⁴⁴ ՁՈՒԿՀ-ն ուժերի կարգավիճակի մասին է մուտքի և ելքի կարգը: ՁՈՒԿՀ լիազորմամբ ուղարկող հեշտացնում է մուտքի և ելքի կարգը: ՁՈՒԿՀ լիազորմամբ ուղարկող պետության զինվորական ներկայացուցիչներն ապաստում են մարսային տարրերից և հարկերից: Հայաստանը միացավ ՁՈՒԿՀ-ին միայն 2004 թվականին: Առաջին հայացուցի պայմանագրի վավերացման մեջ ոչ մի թվականին: Առաջին հայացուցի պայմանագրի վավերացումը 1998-ին և 2004 թվականին և վավերացրել 1997 թվականին, Արդյունաբերության 1998-ին և վավերացրել 2000-ին: Սակայն, եթե հաշվի առնենք ՆԱՏՕ-ի հետ ՀՀ-ի վավերացրել 2000-ին: Սակայն, եթե հաշվի առնենք ՆԱՏՕ-ի հետ ՀՀ-ի հարաբերությունների յուրահատկությունը, կարելի է նշել, որ ՁՈՒԿՀ համաձայնագրին միանալն ազդանշան էր առ այն, որ հարաբերությունների հետագա խորացումն այնևս այլընտրանք չույն:

Հայաստանն իր պատրաստակամությունը հայտնեց միանալու ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագրին (ԱԳԳՏ):⁴⁴ Մասնակցությունը ԱԳԳՏ ծրագրին հետապնդում էր դաշինքի հետ առավել սերտ քաղաքական հարաբերությունների զարգացման, ժողովրդավարական համակարգի ամրապնդման, դաշնակիցների պաշտպանական համակարգի հետ համատեղելիության և փոխգործակցության հնարավոր վերստին բարձր մակարդակի հաստատման և դաշնակիցների օրինակով պաշտպանական համակարգի ստեղծման նպատակ: Վերջինս ենթադրաբար կհանրապետական համակարգի ամրապնդման և հասնել դաշնակիցների հետ անհատական քաղաքական խորհրդակցությունների մեխանիզմի օգտագործման, ինչպես նաև քաղաքական և պաշտպանության համակարգի բարենորոգումների իրականացման միջոցով:

ՆԱՏՕ-ի և եվրոպական տարրեր կառույցների հետ Հայաստանի հարաբերությունների հաստատումը, զարգացումը, խորացումը և ընդարձակումը իրականացվում է փոխլրացման քաղաքականության շրջանակներում, որը Հայաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարերից մեկն է:

Հայաստանը պահպանելով իր սերտ ուզանական համագործակցությունը Ռուսաստանի հետ, որը խտրախառն է 1997թ. օգոստոսի 29-ին ստորագրված «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության» պայմանագրի հիմնադրույթների և Հավարական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը՝ ՀԱՊԿ, անդամակցելու սկզբունքի վրա, միաժամանակ, ելնելով իր ազգային անվտանգության ավելի բարձր մակարդակ ապահովելու կենսական պահանջներին, համագործակցության հաստատեց նաև ժամանակակից աշխարհում միակ անհնարաբար ռազմա-քաղաքական կազմակերպության՝ ՆԱՏՕ-ի հետ: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յապի դե Հուսիս Մյենֆերը 2004թ. այնանը Հայաստան կատարելիք այցի նախօրինի հայտարարեց. «Հայաստանն ապացուցում է, որ կարելի է սերտ հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ և միաժամանակ լինել դաշինքի ակտիվ գործընկեր: Հայաստանն իսկապես լավ կապեր ունի Ռուսաստանի հետ, սակայն դա չպետք է որևէ կերպ խղճողոտի ՆԱՏՕ-ի հետ նրա հարաբերությունների զարգացմանը»⁴⁵:

2005 թվականի հոկտեմբերի 19-22-ը նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յապի դե Հուսիս Մյենֆերի հետ հանդիպման ընթացքում հանգամանորեն ընթացվեցին եվրատլանտյան դաշինքի հետ Հայաստանի անհատական գործընկերության գործողությունների ծրագրի դրույթները: Կարևորվեց Հայաստանի մասնակցությունը ՆԱՏՕ-ի շրջանակներում իրագործվող մի շարք ծրագրերին, մասնավորապես Կոսովոյում ՀՀ խաղաղապես ուժերի գործունեությունը: Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններում ընդգծվեց անհատական մոտեցումը, նաև կարևորվեց փոխլրացման սկզբունքը, նկատի առնելով կողմերի՝ Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունները:

Այսպիսով, Հայաստանն անդրկովկասյան տարածաշրջանում միակ երկիրն է, որը և Ռուսաստանի ու ՀՀՊԿ-ի, և ՆԱՏՕ-ի հետ հաստատելի ու զարգացման է մնալ հարաբերություններ, ինչն, անուշադ, մեծ առավելություն է: Դա Հայաստանին երաշխավորում է ոչ միայն ազգային անվտանգության ավելի բարձր մակարդակ, այլև ամրապնդում է նրա միջազգային դիրքը՝ որպես տարածաշրջանային կարևորագույն գործոն:

42 "Cooperative Best Effort-2003" գործախոսությունն անցկացվեց երևանում 2003թ-ի հունիսին, 19 մասնակից երկրներից 400 ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն ներառեց երկու համաձայնագրի ստորագրումը՝ դաշնային գործախոսություն և ընդլայնված օմանդակության համադրման գործողություն:

43 Status of Forces Agreement (SofA) - Ձինված ուժերի կարգավիճակի մասին ԱՏՕ-ի համաձայնագիր, որը կարգավորում է մասնակից երկրներում օտարերկրյան զինված ուժերի կարգավիճակը:

44 Individual Partnership Action Plan (IPAP) - Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր:

45 «Ազգ» օրաթերթ, 14 հոկտեմբերի, 2005թ., էջ 4:

ՀԱՎԵԼՎԱԾ Ի.

Հիմնական փաստաթղթեր

Փաստաթուղթ 1 – Ատլանտյան կանոնադրություն

Փաստաթուղթ 2 – ՄԱԿ-ի կանոնադրություն, նախաբան

Փաստաթուղթ 3 – ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 51

Փաստաթուղթ 4 – Բրյուսելի համաձայնագիր

Փաստաթուղթ 5 – Դյուսիսատլանտյան դաշնագիր

Փաստաթուղթ 1

Ատլանտյան կանոնադրություն

Օգոստոսի 14, 1941թ.

«Միացյալ Նահանգների նախագահը և վարչապետ պարոն Չերչիլը, ով ներկայացնում է Նորին գերազանցության Միացյալ Թագավորության կառավարությունը, հանդիպեցին ծովում: Նրանց ուղեկցում էին երկու կառավարությունների ներկայացուցիչները, որոնց բխում էին երկու պետությունների ռազմական ուժերի՝ ծովային և օդային ծառայությունների բարձրատիճան սպաներ: Մանրամասն քննարկվեց Լենդ-լիվի օրինագրի համաձայն Միացյալ Նահանգներին և բոլոր այն երկրներին, որոնք ակտիվորեն պայքարում են ագրեսիայի դեմ, զինամթերքի արամադրման հիմնախնդիրը: Այս քննարկումներին մասնակցում էր քրիտանական կառավարության մատակարարումների նախարար Լորդ Բիվերբրոքը: Նա պատրաստվում է մեկնել Միացյալ Նահանգներ՝ քննարկելու հետագա մանրամասները Միացյալ Նահանգների կառավարության համապատասխան պաշտոնյաների հետ: Այս քննարկումների ժամանակ կարծարժվի նաև Խորհրդային Միությանը զինամթերք մատակարարելու խնդիրը: Նախագահը և վարչապետը մի շարք քննարկումներ են ունեցել: Նրանք խոսեցին աշխարհին սպառնացող վտանգների մասին, որոնց պատճառը հիտլերյան կառավարության և նրան աջակցող մի շարք այլ կառավարությունների կողմից ռազմական գերիշխանության ձգտող քաղաքականությունն է: Նրանք պարզաբանեցին նաև այն քայլերը, որ յուրաքանչյուր երկիր նախաձեռնել էր՝ այս սպառնալիքներին դիմակայելու և իրենց երկրների անվտանգությունն ապահովելու նպատակով: Նրանք համաձայնվեցին միասին հանդես գալ հետևյալ հայտարարությամբ: Միացյալ Նահանգների նախագահը և վարչապետ պարոն Չերչիլը, ով ներկայացնում է Նորին գերազանցության Միացյալ Թագավորության կառավարությունը, հանդիպելով ծովում, հարկ են համարում համապատասխանաբար տեղեկացնել

իրենց երկրների քաղաքականության որոշ ընդհանուր սկզբունքների մասին, որոնք հիմք են հանդիսանում աշխարհի ազազան ավելի պայծառ տեսնելու իրենց հույսերի համար:

1. Նրանց երկրները չեն ձգտում տարածքային կամ այլ տիպի ընդլայնման:
2. Նրանք չեն ցանկանում տարածքային փոփոխություններ, եթե դրանք չեն համապատասխանում տվյալ ժողովուրդների ազատորեն արտահայտված կամքին:
3. Նրանք հարգում են ժողովուրդների սեփական կառավարության ձևն ընտրելու իրավունքը և ցանկանում են տեսնել անկախ իրավունքների և ինքնակառավարման վերականգնում այնտեղ, որտեղ ուժով ժողովուրդին զրկել են դրանցից:
4. Հավատարին մնալով ստանձնած պարտավորություններին՝ նրանք կփորձեն բոլոր պետությունների (մեծ, քի փոքր, հաղթող, քե պարտվող) համար փպահովել համաշխարհային շուկա մուտքի և իրենց տնտեսական քարգավանման համար անհրաժեշտ համաշխարհային ռեսուրսների հասանելիության հավասար պայմաններ:
5. Տնտեսական դաշտում նրանք ցանկանում են խթանել համագործակցությունը բոլոր երկրների միջև՝ բոլորի համար ապահովելով քարելավված աշխատանքային չափորոշիչներ, տնտեսական առաջընթաց և սոցիալական ապահովություն:
6. Նացիստական բռնակալության վերջնական ոչնչացումից հետո նրանք հույս ունեն տեսնել խաղաղության հաստատում, որը հնարավորություն կընձեռի բոլոր պետություններին ապահով ապրել իրենց սահմաններում, և որը փաստության երաշխիքը կլինի, որ բոլոր մարդիկ բոլոր երկրներում կարող են ապրել՝ ազատ փախից և կարիքից:
7. Նման խաղաղությունը բոլոր մարդկանց հնարավորություն կընձեռի ծովերն ու օվկիանոսներն անցնել առանց որևէ արգելքի:
8. Նրանք հավատացած են, որ աշխարհի բոլոր պետությունները պետք է հրաժարվեն ուժի գործադրումից՝ ելնելով քե իրատեսական և քե՝ հոգևոր պատճաններից: Զանգի ապազա խաղաղությունը չի կարող պահպան-

վել այն դեպքում, եթե շարունակվում է գեների օգուագործումը ցամաքում և ծովում, ինչպես նաև օդում, այն երկրների կողմից, որոնք քոնությանք պատնուում են կամ կարող են սպառնալ իրենց սահմաններից դուրս, ապա վերոհիշյալ երկրները հավատացած են, որ մինչ ընդհանուր անվտանգության ավելի լայն և մշտական համակարգի հիմնումն անհրաժեշտ է զինաթափել նման պետություններին: Նմանապես նրանք կաջակցեն և կխրախուսեն ցանկացած այլ գործնական միջոցներ, որոնք կթեթևացնեն բոլոր խաղաղասեր ազգերի պայքարն ընդդեմ սպառազինման»:

*Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս,
լի վճռակամությամբ*

փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը, և վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարությունն ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, և ավելի մեծ ազատության պայմաններում խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը.

Եվ համոզման աղ նպատակներին

ցուցաբերել հանդուրժողություն ու միմյանց հետ ապրել խաղաղությամբ, որպես բարի դրացիներ, և միավորել մեր ուժերը միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար, և համապատասխան սկզբունքների ընդունման և մեթոդների սահմանման միջոցով երաշխավորել զինուժի գործադրումը քաղաքասպես ընդիմառոր շահերին համապատասխան, և միջազգային լծակները գործադրել բոլոր ժողովուրդների տնտեսական ու սոցիալական առաջընթացը խթանելու համար,

Որոշել ենք միավորել մեր ջանքերն այդ նպատակներին հասնելու համար

Ըստ այդմ, մեր համապատասխան կառավարությունները, ժողովված Ման Ֆրանցիսկոյում, քավարար ու պատշաճ կերպով իրենց լիազորությունները փաստած ներկայացուցիչների միջոցով համաձայնել են ընդունել Միավորված ազգերի կազմակերպության սույն կանոնադրությունը և հիմնում են Միավորված ազգեր անվտանգության միջազգային կազմակերպությունը:¹

Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա - հոկտեմբերի 24, 1945թ.

Հոդված 51

Սույն կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անտատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկասկածելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ: Անդամների կողմից իրենց ինքնապաշտպանության իրավունքն իրականացնելու միջոցառումների մասին անմիջապես հաղորդում են Անվտանգության խորհրդին և, սույն կանոնադրության համաձայն, ոչ մի կերպ չեն ազդում Անվտանգության խորհրդի հեղինակության ու լիազորության վրա՝ ցանկացած ժամանակ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար:²

¹ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան, էջ 3-4

² Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան, էջ 30

Փաստաթուղթ 4 Բյուսելի համաձայնագիր

Բյուսել, Բելգիա - մարտի 17, 1948թ.

Նորին արքայական բարձրություն Բելգիայի խնամակալ արքայազնը, Ֆրանսիայի Հանրապետության նախագահը, Ֆրանսիական Միության նախագահը, Նորին արքայական բարձրություն Լյուքսեմբուրգի Մեծն դքսուհին, Նորին մեծություն Նիդերլանդների թագուհին և Նորին մեծություն Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի և անդրծովյան բրիտանական կալվածքների թագավորը

որչուն են.

- մեկ անգամ ևս հավատել իրենց հավատը մարդու հիմնարար իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, ինչպես նաև Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ նշված այլ իդեալների հանդեպ,
- ամրացնել և պահպանել ժողովրդավարության, անձնական և քաղաքական ազատության, սահմանադրական ավանդույթների և օրենքի գերակայության սկզբունքները, որոնք ընդհանուր ժառանգություն են,
- այս նպատակներն ի նկատի ունենալով՝ ամրապնդել տնտեսական, սոցիալական և մշակութային կապերը, որոնք արդեն իսկ միավորում են վերոհիշյալ պետությունները,
- համագործակցել հավատարմորեն և համադրել ջանքերը՝ Արևմտյան Եվրոպայում տնտեսական վերականգնման համար ամուր հիմք ստեղծելու նպատակով,
- համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ օժանդակել միմյանց՝ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը պահպանելու և ագրեսիայի ցանկացած քաղաքականության դեմ պայքարելու նպատակով,
- ձեռնարկել համապատասխան քայլեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել Գերմանիայի կողմից ագրեսիայի քաղաքականություն վերսկսելու հնարավորության դեպքում,

- այս նպատակների իրականացման համար առաջադիմորեն հարաբերվել այլ պետությունների հետ, որոնք ներընթացում են համանման իդեալներով և լի են նման վճռակամությամբ,
- ցանկանալով հասնել վերոհիշյալ նպատակների իրականացմանը՝ համաձայնագիր կնքել տնտեսական, սոցիալական և մշակութային համագործակցության և համատեղ ինքնապաշտպանության վերաբերյալ,
- իրենց լիազորներ նշանակել Նորին արքայական մեծություն Բելգիայի խնամակալ արքայազնը՝ վարչապետ, արտաքին գործերի նախարար՝ Նորին գերազանցություն պարոն Փոլ-Անրի Սվաակին, ֆինանսների նախարար Նորին գերազանցություն պարոն Գաստոն Լյակենսին, Ֆրանսիայի Հանրապետության նախագահը և Ֆրանսիական միության նախագահը՝ արտաքին գործերի նախարար Նորին գերազանցություն պարոն Ժորժ Բիդոյին և Բյուսելում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Նորին գերազանցություն պարոն Ժան դը Օթելյոնին, Նորին արքայական բարձրություն Լյուքսեմբուրգի Մեծն դքսուհին՝ արտաքին գործերի նախարար Նորին գերազանցություն պարոն Յոզեֆ Բեկին և Բյուսելում Լյուքսեմբուրգի արտակարգ պատվիրակ և լիազոր նախարար Նորին գերազանցություն պարոն Իոթեխտ Լյսին, Նորին մեծություն Նիդերլանդների թագուհին՝ արտաքին գործերի նախարար Նորին գերազանցություն քաղոն Վան Բորգելեյը Վան Օստերհոտթին և Բյուսելում Նիդերլանդների արտակարգ և լիազոր դեսպան Նորին գերազանցություն քաղոն Բինե Ֆիլիպ Վան Հաբրնամ Թո Սլուբենին, Նորին մեծություն Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի և անդրծովյան բրիտանական կալվածքների թագավոր Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի համար՝ պառլամենտի անդամ, արտաքին գործերի գծով գլխավոր պետքարտուղար պատվարժան Էռնեստ Բեկին և Բյուսելում Նորին բրիտանական մեծության արտակարգ և լիազոր դեսպան Նորին գերազանցություն սեր Ջորջ Ռիլյան Ռենդելին, ովքեր իրենց լիազորությունների շրջանակներում համաձայնվել են հետևյալի շուրջ.

Հողված I

Հանդգված լինելով շահերի ընդհանրության և Եվրոպայի տնտեսական վերականգնման գործընթացը խթանելու նպատակով միավորվելու անհրաժեշտության մեջ՝ սույն համաձայնագիրը ստորագրող կողմերն իրենց տնտեսական գործունեությունը կկազմակերպեն և կազմակերպել են այնպես, որպեսզի հնարավոր լավագույն արդյունքներ արձանագրվեն: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է վերացնել տնտեսական քաղաքականությունների միջև առկա կոնֆլիկտները, համադրել արտադրությունը և զարգացնել առևտրական փոխանակումները:

Առաջին պարբերությունում նշված համագործակցությունը, որը կկարգավորվի Հողված VII-ում նշված խորհրդատվական հանձնաժողովի և այլ կառույցների կողմից, չպետք է ներառի որևէ կրկնօրինակում կամ նախապաշարմունք համաձայնագրի կողմերի տնտեսությունների հանդեպ, այլ հակառակը, պետք է աջակցի դրանց աշխատանքներին:

Հողված II

Համաձայնագրի կողմերը կհամադրեն ջանքերը և ուղղակի խորհրդատվության, և մասնագիտացված կառույցների միջոցով, որպեսզի խթանեն իրենց ժողովուրդների կենսամակարդակի բարձր չափորոշիչների ձևավորման գործընթացը և համապատասխանաբար զարգացնեն իրենց երկրների թե՛ սոցիալական և թե՛ այլ ոլորտները:

Համաձայնագրի կողմերը սեղմ ժամկետներում կխորհրդակցեն մասնագիտացված կառույցների կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման խնդրի շուրջ, որոնք ունեն անհետաձգելի գործնական կարևորություն և վերաբերում են սոցիալական հիմնախնդիրներին: Կողմերը կփորձեն հնարավորին արագ ավարտել սոցիալական ապահովության ոլորտի վերաբերյալ բնարկումները:

Հողված III

Համաձայնագրի կողմերն ամեն կերպ կջանան, որպեսզի իրենց ժողովուրդներին առաջնորդեն դեպի լավա-

գույն ընկալումն այն սկզբունքների, որոնք հիմքն են իրենց ընդհանուր քաղաքակրթության, ինչպես նաև որպեսզի խթանեն մշակութային փոխանակումները՝ համաժողովների կամ այլ ծրագրերի միջոցով:

Հողված IV

Եթե համաձայնագրի կողմերից որևէ մեկը Եվրոպայում դառնա հարձակման քիթախ, ապա ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի՝ համաձայնագրի մյուս կողմերը հարձակման ենթարկված կողմին կարամադրեն անհրաժեշտ ռազմական և այլ տեսակի օգնություն և օգնություն:

Հողված V

Նախորդ հողվածում նշված գործողությունների ձեռնարկման դեպքում, դրանց մասին պետք է անհապաղ զեկուցել Անվտանգության խորհրդին: Այդ գործողությունները պետք է ավարտել ամմիջապես, երբ Անվտանգության խորհուրդն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի միջազգային խաղաղությունը և անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար: Սույն համաձայնագիրը ոչ մի կերպ չի խոչընդոտում ՄԱԿ-ի կողմից համաձայնագրի կողմերին ներկայացված պարտականությունների իրականացմանը: Այն չպետք է մեկնաբանել որպես ՄԱԿ-ի կանոնադրությանը հաստատված Անվտանգության խորհրդի հեղինակության և պարտականությունների վրա որևէ կերպ ազդելու փորձ: Վերջինս կարող է ցանկացած ժամանակ ձեռնարկել այնպիսի գործողություն, որն ինքն անհրաժեշտ է համարում միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման և վերականգնման համար:

Հողված VI

Համաձայնագրի կողմերը հայտարարում են յուրաքանչյուրն այնքանով, որքանով դա վերաբերում է իրեն, որ իր և համաձայնագրի կողմերից որևէ մեկի կամ մեկ այլ, երրորդ պետության միջև տվյալ պահին առկա ոչ մի

միջազգային պայմանավորվածություն չի հակասում սույն համաձայնագրի դրույթներին: Համաձայնագրի կողմերից ոչ մեկը դաշինք չի կնքի և չի մասնակցի ոչ մի կապիցիայի, եթե այն ուղղված է ընդդեմ համաձայնագրի կողմերից որևէ մեկին:

Հոդված VII

Սույն համաձայնագրի խնդրո առարկա հիմնախնդիրների քննարկման նպատակով համաձայնագրի կողմերը կստեղծեն խորհրդատվական հանձնաժողով, որը կկազմակերպվի այնպես, որպեսզի հնարավորություն ունենա իր գործառնություններն իրականացնել շարունակաբար: Հանձնաժողովը կհանդիպի այն ժամանակ, երբ զգացվի դրա անհրաժեշտությունը:

Համաձայնագրի կողմերի խնդրանքով հանձնաժողովը պետք է անմիջապես հավաքվի, որպեսզի համաձայնագրի կողմերին հնարավորություն ընձեռի քննարկել ցանկացած իրավիճակ, որը կարող է դիտարկվել որպես սպառնալիք ընդդեմ խաղաղության, անկախ նրանից, թե որ տարածաշրջանում է առկա այդ սպառնալիքը: Քննարկումները կարձարվեն Գերմանիայի կողմից ագրեսիվ քաղաքականության վերականգնման վտրոհի դեպքում համաձայնագրի կողմերի վերաբերմունքի և անհրաժեշտ շալիքի մշակման և այնպիսի իրավիճակների դիտարկման հիմնախնդիրները, որոնք կարող են սպառնալ տնտեսական կայունությանը:

Հոդված VIII

Վեճերը խաղաղ միջոցներով կարգավորելու նպատակով վճռակետություն ցուցաբերելու համար՝ համաձայնագրի կողմերը վեճեր քննարկելիս կկիրառեն հետևյալ դրույթները: Սույն համաձայնագրի կողմ մնալու դեպքում, համաձայնագրի կողմերը բոլոր հակամարտությունները կլուծեն՝ հիմնվելով ՄՄԿ-ի միջազգային դատարանի օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ պարբերության վրա՝ դրանք ներկայացնելով դատարան: Սույն կանոնը չի գործի միայն այն դեպքում, եթե կողմը սույն համաձայնագրի կնքելիս դա արել է որոշ

վերապահումներով, և այդ վերապահումը վերաբերում է վեճերի կարգավորմանը:

Բացի այդ, համաձայնագրի կողմերը կփորձեն կողմերի հաշտությանը լուծել այն վեճերը, որոնք չեն կարող կարգավորվել ըստ արդարության միջազգային դատարանի կանոնադրության 36-րդ հոդվածի 2-րդ պարբերության: Եթե առկա է հակասություն, որը խառը բնույթ ունի և ներառում է խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է հաշտություն, ինչպես նաև խնդիրներ, որոնք անհրաժեշտ է կարգավորել դատական կարգով, վիճարկող կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պնդել, որպեսզի իրավական խնդիրների դատական կարգով կարգավորումը նախորդի կողմերի հաշտեցման գործընթացին:

Այս հոդվածի նախորդ դրույթները ոչ մի կերպ չեն խոչընդոտում այլ պատշաճ դրույթների և համաձայնությունների կիրառմանը, եթե դրանք նախատեսում են խաղաղ կարգավորման որևէ այլ մեթոդ:

Հոդված IX

Ըստ համաձայնության՝ համաձայնագրի կողմերը կարող են հրավիրել մեկ այլ պետության միանալու սույն համաձայնագրին այն պայմաններով, որոնք կհամաձայնեցվեն կողմերի և հրավիրված պետության միջև:

Յուրաքանչյուր հրավիրված պետություն կարող է դառնալ սույն համաձայնագրի կողմ՝ Բելգիայի կառավարությանի ի պահ հանձնելու միանալու վավերագիրը:

Բելգիայի կառավարությունը համաձայնագրի կողմերից յուրաքանչյուրին տեղյակ կկազմի մուտքի համար անհրաժեշտ յուրաքանչյուր վավերագրի մասին:

Հոդված X

Սույն համաձայնագիրը պետք է վավերացվի, և վավերագրերը որքան հնարավոր է շուտ պետք է ի պահ հանձնվեն Բելգիայի կառավարությանը:

Այն ուժի մեջ կմտնի վերջին վավերագրի ի պահ հանձնման օրը և դրանից հետո ուժի մեջ կմնա հիսուն տարի:

Հիսուն տարվա ժամկետից հետո համաձայնագրի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի դադարեցնել իր մասնակցությունը համաձայնագրին, եթե նա նախապես, մեկ տարի առաջ, հրաժարականի հայտ է ներկայացրել Բելգիայի կառավարությանը:

Բելգիայի կառավարությունը պետք է տեղեկացնի համաձայնագրի կողմերի կառավարություններին յուրաքանչյուր վավերագրի և կրաժարականի հայտի մասին: Ի վկայումս այս ամենի, վերոհիշյալ լիազորված անձինք ստորագրել են սույն համաձայնագիրը և դրել են իրենց կնիքները:

Սույն փաստաթուղթն ընդունվել է Բրյուսելում, 1948 թվականի մարտի 17-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Այն մեկ օրինակ է և պետք է ի պահ հանձնվի Բելգիայի կառավարության պահոցներ: Համաձայնագրի վավերացված օրինակները Բելգիայի կառավարության կողմից կփոխանցվեն այն ստորագրող կողմերից յուրաքանչյուրին:

Փաստաթուղթ 5

Չյուսիսատլանտյան դաշնագիր

Վաշինգտոն - ապրիլի 4, 1949թ.

Սույն համաձայնագրի կողմերը հաստատում են իրենց հավատը այն նպատակների և սկզբունքների հանդեպ, որոնք շարադրված են Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ և հավաստիացնում են այլ ժողովուրդների ու րոյոր կառավարությունների հետ խաղաղ համագոյակցելու իրենց ցանկության մասին: Նրանք վճռակամորեն են տրամադրված պահպանելու իրենց ժողովուրդների ազատությունը, ընդհանուր ժառանգությունը և քաղաքակրթությունը, որոնք հիմնված են ժողովրդավարության, անհատի ազատության և օրենքի գերակայության սկզբունքների վրա: Նրանք ձգտում են խթանել կայունությունը և բարեկեցությունը Հյուսիսատլանտյան տարածաշրջանում:

Նրանք որոշում են համախմբել իրենց ջանքերը՝ հավաքական պաշտպանության և խաղաղության ու անվտանգության պաշտպանության նպատակով: Այսպիսով, նրանք համաձայնվում են կնքել սույն Հյուսիսատլանտյան դաշնագիրը:

Հոդված 1

Ինչպես նախատեսում է Միացյալ ազգերի կանոնադրությունը, կողմերը պարտավորվում են ցանկացած միջազգային հակամարտություն լուծել խաղաղ ճանապարհով, այնպես, որ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, ինչպես նաև արդարությունը չվտանգվեն: Նրանք պարտավորվում են նաև իրենց միջազգային հարաբերություններում գերծ մնալ սպառնալիքների կամ ուժի այնպիսի կիրառումից, որը հակասում է Միացյալ ազգերի նպատակին:

Հողված 2

Կողմերն իրենց ներդրումը կունենան խաղաղ և քարեկամական միջազգային հարաբերությունների հետագա զարգացման գործում՝ ամրապնդելով իրենց ազատ ինստիտուտները, նպաստելով այդ ինստիտուտների գործունեության հիմքում ընկած սկզբունքների առավելագույն ընկալմանը և խթանելով կայունության և քաղաքական պայմանների ապահովման գործընթացը: Նրանք կփորձեն վերացնել հակամարտություններն իրենց միջազգային տնտեսական քաղաքականություններից և կխրախուսեն տնտեսական համագործակցություն մի քանի կամ բոլոր կողմերի միջև:

Հողված 3

Սույն դաշնագրի նպատակներին արդյունավետորեն հասնելու համար Կողմերը՝ առանձին կամ միասին, շարունակական և արդյունավետ ինքնաօժանդակության և փոխադարձ աջակցության շնորհիվ կպահպանեն և կզարգացնեն իրենց առհաստական ու հավաքական կարողությունը՝ դիմադրելու զինված հարձակման:

Հողված 4

Կողմերը կխորհրդակցեն բոլոր այն դեպքերում, երբ իրենց կարծիքով վտանգված է կողմերից որևէ մեկի տարածքային ամբողջականությունը, քաղաքական անկայտությունը կամ անվտանգությունը:

Հողված 5

Կողմերը համաձայնվում են, որ զինված հարձակումը Կողմերից մեկի կամ մի քանիսի վրա Եվրոպայում կամ Հյուսիսային Ամերիկայում կզիտարկվի որպես հարձակում ընդդեմ բոլորի, հետևաբար, նրանք համաձայնվում են, որ եթե մնան զինված հարձակում կատարվի, ապա նրանցից յուրաքանչյուրը, ըստ Միացյալ ազգերի կանոնադրության 51-րդ հոդվածի, որով ճանաչվում է առհաստական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը, կօժան-

դակի այն կողմին կամ կողմերին, որոնց վրա հարձակում է կատարվել՝ անմիջապես առհաստական կամ մյուս կողմերի հետ համախառնված գործողություն ձեռնարկելով, ներառյալ զինված ուժի կիրառումը: Նման գործողության նպատակն է Հյուսիսատլանտյան տարածաշրջանում անվտանգության վերականգնումն ու պահպանումը:

Յուրաքանչյուր մեծան հարձակման և դրան որպես պատասխան ձեռնարկված գործողությունների մասին պետք է անմիջապես տեղեկացնել Անվտանգության խորհրդին: Նման գործողությունները պետք է ավարտել, երբ Անվտանգության խորհուրդը ձեռնարկի համապատասխան միջոցներ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու և պահպանելու ուղղությամբ:

Հողված 6

5-րդ հոդվածը պարզաբանելու նպատակով զինված հարձակումը սահմանվում է որպես զինված հարձակում, որը

- տեղի կունենան Եվրոպայի կամ Հյուսիսային Ամերիկայի այն պետությունների տարածքներում, որոնք համարվում են կողմեր, Յուրանիայի այժիրյան տարածքներում, Խեցզեստնի արևադարձից հյուսիս ընկած այն տարածքներում կամ կղզիներում, որոնք գտնվում են Հյուսիսատլանտյան տարածաշրջանում գտնվող կողմերի իրավասության ներքո,
- կատարվում է ընդդեմ կողմերի զինված ուժերի, նավերի կամ օդանավերի վրա, երբ տեղի է ունենում Եվրոպայի այն տարածքներում, որտեղ կողմերի օկուպացիոն ուժերը տեղակայված են մինչ այն օրը, երբ ուժի մեջ կմտնի սույն դաշնագիրը, կամ էլ Միջերկրական ծովում, կամ Հյուսիսատլանտյան տարածաշրջանում գտնվող՝ Խեցզեստնի արևադարձից հյուսիս ընկած տարածքներում կամ կղզիներում:

Հողված 7

Սույն դաշնագիրը չի ազդում և չպետք է մեկնաբանվի որևէ կերպ որպես ազդեցության փորձ Միացյալ ազգերի

կազմակերպության անդամ հանդիսացող կողմերի այն իրավունքների և պարտականությունների վրա, որոնք հաստատված են ՄԱԿ-ի կանոնադրությամբ, կամ էլ որպես փորձ՝ ազդելու Անվտանգության խորհրդի հիմնական պարտականության՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման վրա:

Հոդված 8

Յուրաքանչյուր կողմ հայտարարում է, որ իր և կողմերից որևէ մեկի կամ մեկ այլ, երրորդ պետության միջև տվյալ պահին առկա ոչ մի միջազգային պայմանավորվածություն չի հակասում սույն դաշնագրի դրույթներին: Այն պարտավորվում է չմասնակցել որևէ միջազգային պայմանավորվածության, եթե այն հակասում է սույն դաշնագրին:

Հոդված 9

Սույնով կողմերը ձևավորում են մի Խորհուրդ, որտեղ ներկայացված կլինի Կողմերից յուրաքանչյուրը: Խորհուրդը կզմեմարկի սույն դաշնագրի իրականացման հետ կապված հարցեր: Խորհուրդը կկազմակերպվի այնպես, որ այն կարողանա խորհրդակցության նպատակով շտապ հավաքվել ցանկացած ժամանակ: Այն կարող է անհրաժեշտության դեպքում ձևավորել ենթակառույցներ, մասնավորապես, այն պետք է անմիջապես հաստատի պաշտպանության հանձնաժողով, որը կառաջարկի համապատասխան միջոցներ՝ հոդված 3-ը և 5-ը իրականացնելու համար:

Հոդված 10

Հիմնվելով միաձայն համաձայնության վրա՝ կողմերը կարող են իրավիճակ ցանկացած այլ եվրոպական պետության միասնալ դաշնագրին, եթե վերջինս կարող է աջակցել դաշնագրի սկզբունքների տարածմանը և նպաստել Հյուսիսատլանտյան տարածաշրջանում անվտանգության ապահովմանը: Յուրաքանչյուր իրավիճակում պետություն կարող է դառնալ սույն դաշնագրի կողմ՝

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանն ի պահ հանձնելով միասնալու համար անհրաժեշտ վավերագիր:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը կողմերից յուրաքանչյուրին կտեղեկացնի միասնալու համար անհրաժեշտ յուրաքանչյուր այսպիսի վավերագրի մասին:

Հոդված 11

Սույն դաշնագիրը կվավերացվի և կողմերը կիրականացնեն դրա դրույթները՝ հասնածայն յուրաքանչյուրի սահմանադրական գործընթացի: Վավերագրերը պետք է ի պահ հանձնվեն Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը որքան հնարավոր է շուտ: Վերջինս կտեղեկացնի մյուս կողմերին ի պահ հանձնված յուրաքանչյուր վավերագրի մասին:

Դաշնագիրն ուժի մեջ կմտնի այն պետությունների միջև, որոնք հաստատել են այն և հենց այն պահից, երբ ավանդապահին ի պահ կհանձնվի դաշնագիրը ստորագրող կողմերի վավերագրերի մեծամասնությունը՝ դրանց թվում Բելգիայի, Կանադայի, Ֆրանսիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների: Իսկ մյուս պետություններում այն ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ նրանք ի պահ կհանձնեն իրենց վավերագրերը:

Հոդված 12

Դաշնագրի ուժի մեջ մտնելուց տաս տարի անց, կամ դրանից հետո, եթե կողմերից որևէ մեկը համոզես զա մնան լսնդրանքով, կողմերը պետք է վերանայեն դաշնագիրը՝ ի նկատի ունենալով այն գործոցները, որոնք տվյալ ժամանակահատվածում կարող են ազդել Հյուսիսատլանտյան տարածաշրջանում խաղաղության և անվտանգության վրա, ներառյալ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանվող հանդիսաճուր և տարածաշրջանային կազմավորումների զարգացումը:

Հողված 13

Դաշնագրի ուժի մեջ մտնելուց քսան տարի անց յուրաքանչյուր կողմ իրավունք ունի դադարեցնել իր մասնակցությունը դրան, եթե նա նախապես, մեկ տարի առաջ, հրաժարականի հայտ է ներկայացրել Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը, որը պետք է տեղեկացնի կողմերի կառավարություններին յուրաքանչյուր հրաժարականի հայտի ավանդման մասին:

Հողված 14

Սույն համաձայնագիրը, որի անգլերեն և ֆրանսերեն օրինակները հավասարազոր են, ի պահ կհանձնվեն Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության պահոցներում: Այդ կառավարության կողմից մյուս ստորագրող կողմերին կփոխանցվեն համաձայնագրի վավերացված պատճեները:

1. 5-րդ հոդվածում նշված տարածքների սահմանումը վերանայվեց Հյուսիսատլանտյան համաձայնագրի արձանագրության երկրորդ հոդվածով, կեր 1951 թվականի հոկտեբերի 22-ին Հունաստանն ու Թուրքիան մտան ՆԱՏՕ:
2. 1963 թվականի հունվարի 16-ին Հյուսիսատլանտյան խորհուրդը նշեց, որ այն պարբերությունները, որոնք վերաբերվում են Ֆրանսիայի ավժիրյան տարածքներին 1962 թվականի հուլիսի 3-ից ի վեր, համարվում են անվավեր:
3. Դաշնագիրն ուժի մեջ մտավ 1949 թվականի օգոստոսի 24-ին, բոլոր ստորագրող կողմերի վավերագրերն ի պահ տալուց հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ II.

Անդամ երկրները և ՆԱՏՕ-ի անդամակցության տարեթվերը

Խումբ 1 - ՆԱՏՕ և ԵԱԳԽ

Խումբ 2 - Գործընկերություն հանուն խաղաղության (ԳՀԽ)

ՆԱՏՕ-ի և ԵԱԳԽ երկրների քարտեզ

Խումբ 1 – ՆԱՏՕ և ԵԱԳԽ

ԵԱԳԽ-ն կազմված է ՆԱՏՕ-ի բոլոր երկրներից և Գ-ՀԽ մեջ մտնող պետություններից, որոնց ցանկը ներկայացված է հաջորդիվ: Թեև բոլոր պետությունները անդամներ են, բոլորը չեն մասնակցում ԵԱԳԽ ֆորումներին: Մասնակցությունը պարտադիր չէ:

1949 թվական

Անդամ պետությունները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Բելգիա, Դանիա, Կանադա, Իտալիա, Իսլանդիա, Լյուքսեմբուրգ, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Ֆրանսիա
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 12

1952

Թուրքիա, Հունաստան

Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 14

1955

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Արևմտյան Գերմանիա)

Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 15

1982

Իսպանիա

Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 16

1990

Նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն (Արևելյան Գերմանիա)

Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 16

1999

Չեխիայի Հանրապետություն, Հունգարիա, Լեհաստան
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 19

2004

Բուլղարիա, Լատվիա, Լիտվա, Սլովակիա, Սլովենիա, Ռումինիա, Էստոնիա

Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 26

ԵԱԳԽ-ն կազմված է ՆԱՏՕ-ի բոլոր երկրներից և Գ-ՀԽ մեջ մտնող պետություններից, որոնց ցանկը ներկայացված է հաջորդիվ: Թեև բոլոր պետությունները անդամներ են, բոլորը չեն մասնակցում ֆորումներին: Մասնակցությունը պարտադիր չէ:

Խումբ 2 - Գործընկերություն հանուն
խաղաղության (ԳՀԽ)

1994

Ադրբեջան, Ալբանիա, Բուլղարիա**, Թուրքմենստան,
Էստոնիա**, Ղազախստան, Վրդգեստան, Հայաստան, Հուն-
գարիա*, Լատվիա**, Լիտվա**, Լեհաստան*, Մոլդովա,
Շվեդիա, Ռումինիա**, Ռուսաստանի Ֆեդերացիա, Սլով-
ակիա**, Սլովենիա**, Չեխիայի Հանրապետություն*,
Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ֆինլանդիա
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 23

1995

Ավստրիա, Բելուոս, Նախկին Հարավսլավական Մակե-
դոնիայի Հանրապետություն
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 26

1996

Շվեյցարիա
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 27

1999

Իռլանդիա***
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 25

2000

Խորվաթիա
Անդամ պետությունների ընդհանուր թիվը՝ 26

Ներկայում

20***

* - Այս պետությունները ԵԱՏՕ-ի լիիրավ անդամ են դարձել 1999 թվականին:
** - Այս պետությունները ԵԱՏՕ-ի լիիրավ անդամ են դարձել 2004 թվականին:
*** - Թիվը կրճատվում է, որովհետև պետությունները դառնում են ԵԱՏՕ-ի
լիիրավ անդամ:

ՀԱՎԵԼՎԱԾ III.

Լրացուցիչ գրականություն

ԵԱՏՕ-ի հրատարակություններն ըստ
հրատարակման տարեթվերի՝

NATO Handbook 2001, 2001.

NATO Today: Building Better Security
and Stability for All, 2002.

NATO After Prague, January 2003.

NATO Briefing: Crisis Management, October 2003.

Enhancing Security and Extending Stability
Through NATO Enlargement, April 2004.

NATO in the 21st Century, May 2004.

NATO Briefing: NATO in the
Balkans, November 2004.

ԵԱՏՕ-ին վերաբերող նյութեր կարելի է գտնել
www.nato.int/docu/home.htm կայքում:

ՀԱԿԵԼԱՅՆ IV. ՆԱՏՕ-ի ճամբանակազրույթունը

1949



Ապրիլի 4-ին ստորագրվեց Յուրախառնակախղայան դաշինքը

1950

1951



Քաղցկեցի Պաշտակալային ուժեղի գլխավոր կենտրոնակախղայանը եվրոպայում

1952

1953

Ֆրանսիայում և Թուրքիայում միացան դաշինքին

1954



Գերմանիայի Ղաշնակային Ֆանդակախղայանը միացավ դաշինքին

1955

1956

Սուեի ջրանցի վերաբերյալ անուանաձայնութունները տարիպեցին ՆԱՏՕ-ին ուժեղացնել իր ճարակախղայան դերակախղայանը

1957

1961



ԱՄՆ նախագահ Յոն Բեննեդի այցը ՆԱՏՕ

1966

Ֆրանսիայում դուրս եկավ ՆԱՏՕ-ի համադրված ռազմական կառույցից



ՆԱՏՕ-ի կենտրոնակախղայան գրասենյակը և Ղաշնակախղայան ուժերի գլխավոր կենտրոնակախղայանը եվրոպայում տեղափոխվեցին Բելգիա

1967

1968

1970

1971

1972

1973



ՆԱՏՕ-ն և Վարշավայի համաձայնագրի երկրները բանակցում են սաթակախղայանությունների կրճատման վերաբերյալ

1982

1989

1990

1991



Բանդելը Բեռլինի պատը



ՆԱՏՕ-ն արձակեց իր առաջին կապի արբանյակը



Իրազմիան միացավ դաշինքին



ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար ԱանՖոտի ու որոնքը այցելեց Մոսկվա

ՆԱՏՕ-ն իր պատրաստակամությունը հայտնեց օժանդակել ԱՄՆ-ի խաղաղարար գործունեությանը հայկին Հարավսլավիայում

1992

1992

1996

1999

2000

2001

2002

2003

2004

2005



Հայաստանը ստորագրեց «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին միանալու փաստաթուղթը



ՀՀ նախագահ Որբերտ Բոչայրյանի այցը ՆԱՏՕ (1999/2003)



ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերթսոնի այցը երևան



ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի այցը ՆԱՏՕ



Չեխիան, Գոնգարիան և Լեհաստանը միացան դաշինքին

Բուլղարիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Սլովակիան, Սլովենիան և Ռումինիան միացան դաշինքին



ՀՀ նախագահ Որբերտ Բոչայրյանի այցը ՆԱՏՕ